

ԵՐԱԿՐՈՆԵՅԱՆ ՄԱՍԿՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱՄՄՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



Տարեմուտի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ՝ ի Հայրենիս եւ ի Սփյուռս։

Դիմավորում ենք փրկչական 2014 թվականը։ Մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան խորհրդով նոր տարի է սկսվում։ Ժամացույցի ազդարարող զարկերի հետ մեր եկեղեցիներում աղոթք ենք բարձրացնելու երկինք, որ 2014 թվականը լինի երկնային օրհնության ու շնորհներով լեցուն տարի եւ աշխարհն ավելի մոտեցնի խաղաղության ու մարդկանց մեջ հաճության այն օրինյալ օրվան, երբ չեն լավի բռնամտության ծայրեր ու պատերազմի որոտ, երբ ամենուր կյանքը

կծաղկի եղբայրսիրության, բարօրության ու խնդրության մեջ։

Աստծո շնորհով 2013 թվականին մեր կյանքում ունեցանք բարի արդյունքներ, նաեւ կրեցինք դժվարություններ, ինչպես Հայրենիքում, այնպես եւ Սփյուռքում։ Մեր առջեւ դեռ ծառացած են մնում մեր երկրի զարգացման, մեր արդար իրավունքների պաշտպանության, մեր պետականության ամրապնդման, ազգային եւ հոգեւոր մեր կյանքը շենացնելու խնդիրները։ Մեզ մտահոգում է Մերձավոր Արեւելքում հակամարտությունների մեջ ապրող հայորդյաց դժվարին վիճակը։ Լի ենք հավատով, որ ազգիս զավակունք, ինչպես միշտ, պիտի միավորվեն հայրենյաց եւ ազգի սիրով եւ հաղթահարեն հոգաշատ կյանքը Հայրենիքում՝ դարձնելով այն ազգին համախմբող բարձր տունը հայության. պիտի միավորվեն միմյանց սատարելու եւ գործակից լինելու՝ հայրենաշեն ու ազգաշեն ձեռնարկներին։ Այս առումով, սիրելիներ, ինչպես առաքյալը պիտի ասեր՝ «մեծ վստահություն ունեմ ձեր հանդեպ, մեծապես հպարտ եմ ձեզանով...» (Բ Կորնթ. 7. 4), որովհետեւ հավատավոր մեր ժողովուրդն անվեհեր դիմակայում է դժվարությունների, համբերում նեղությունների մեջ եւ ապրում լուսավոր իր գալիքը կերտելու վճռականությամբ՝ հաստատուն պահելով վերածնվող, ազատ իր կյանքի վերընթաց ուղին։

Տարեմուտի այս երեկո Հայրապետիս խորհրդն է մեր սիրեցյալ ժողովրդին, որ տարին ապրենք որպես հոգեւոր նորոգության եւ ուխտի տարի։ Մեր կյանքի հիմք դարձնենք ազնիվն ու արդարը, բարձր պահենք քրիստոնեական մեր արժեքները, ուղղենք մեր սխալներն ու բացթողումները՝ մերժենք եւ մեզանից հեռու վանենք մեր առաջընթացը կասեցնող երեւոյթները, որպեսզի ի գործ լինենք շենացնել ու ծաղկեցնել մեր կյանքը Հայրենիքում եւ ի Սփյուռս աշխարհի եւ 2015 թվականին մաքուր խղճով կանգնենք հիշատակի առջեւ մեր նահատակների։

Միաձմաէջ Սուրբ տաճարի առջեւ Մեր հայցն ենք առաքում առ Բարձրյալը, որ 2014 թվականը խաղաղություն բերի աշխարհին համայն, բարի կամք՝ մարդկանց ու ժողովուրդներին՝ հակամարտությունները կարգավորելու եւ հաստատելու հուսառատ ուղիներ երջանիկ ու բարձր կյանքի։

Աստծո օրհնությունն ու ամենաառատ շնորհներն ենք հայցում մեր երկրին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին։ Աղոթում ենք նեղությունների մեջ գտնվող, դժվարություններ դիմակայող մեր ազգի զավակների համար, Մեր մաղթանքն ենք բերում Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի մարտիկներին եւ բոլոր նրանց, ովքեր տարեմուտը դիմավորում են ծառայության մեջ։ Թող Տերը պարգևի ամենքիս, սիրելիներ, քաջառողջությամբ, բարիքով, ուրախությամբ լի տարի։ Ընդհանրապես Նոր տարի։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱՄԸ՝ ՍՈՒՐԲԵՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6-ին՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Զրիստոսի Սբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնին, Մայր տաճարում Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Պատարագի սկզբում հայրապետական խաչվառագարո թափորն Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ամպիովանիով առաջնորդեց Մայր տաճար։ Ամպիովանակիրներն էին սուղանահայ բարերար Հրաչ Մարտիրոսյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Էլբակյանը, արվեստաբան Հրավարո Հակոբյանը եւ ՀՀ վաստակավոր արտիստ Տիգրան Ներսիսյանը։ Նորին Սրբությանը՝ որպես առընթերականեր,

սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանը եւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը։

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Ձորինեցի արարողություն։ Ձորինեցի խաչի կնքահայրն էր մոսկվաբնակ բարերար Հայկ Մաղաբեյանը։

Պատարագին ներկա էին ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը եւ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, կրթության, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչներ։

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

«Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւնն եւ կեանք»։
Յովհ. ԺԴ 6

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ ի Հայրենիս, Արցախ եւ ի Սփյուռս.

Զրիստոսի՝ մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան բերկրանքով այսօր մեր ցնծագին գոհաբանությունն ենք բարձրացնում առ Աստված։ Փառաբանում ենք մեր Փրկչին՝ Բեթղեհեմում ծնված մանուկ Հիսուսին։ Սուրբ Ծննդյան օրինյալ օրը երկիրը երկինք դարձավ, եւ նրաւում ծագեց Արդարության արեգակը՝ ճշմարտության լույսով լուսավորելու համար մարդկային հոգիները, որպեսզի ճանաչեն, տեսնեն ու գտնեն իրենց փրկությունը։

Աստծո Որդին խոնարհվեց երկնային բարձունքներից, մարդացավ ու աշխարհ եկավ՝ բանասարկուի խաբեությամբ դրախտից վտարված մարդուն ազատելու մեղքից եւ մեղք սերմանող սատանայի իշխանությունից։ Ե-



կավ, պատվիրանազանցությամբ Աստծո դեմ ելած նախաստեղծ մարդու կորուսյալ սերունդներին վերստին երկնքի արքայություն վերադարձնելու եւ Աստծո որդեգիրները դարձնելու։ «Ցոյց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ, քանզի դեպի քեզ, Տէր, բարձրացրի հոգիս» (Սաղմ. ՃԽԲ 8), ի պատասխան մարդկության այս աղերսի, որ սաղմոսերգուի շուրթերով երկինք էր բարձրաւում, հնչեց մեր Փրկչի ձայնը. «Ես

եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»։

Ճշմարտությունը եւ կյանքը իր անձի հետ նույնացնելով՝ մեր Տերը ճշմարտությունը հավասար արժեք հռչակեց կյանքին։ Նա ճշմարտության ճառագայթներով ցրեց մարդկային մոլորություններն ու մեղսագործությունների խավարը եւ պարգեւեց մարդկանց ճշմարտության Սուրբ Հոգին (Հովհ. ԺԴ 17), որպեսզի մարդկության ընթացքը հաստատվի խաղաղության ու արդարության, միմյանց հանդեպ սիրո եւ ազնվության վրա հիմնված կյանքի մեջ։

Տիրոջ փրկագործությամբ պարտություն կրած չարն այսօր էլ մոլեգնությամբ պատերազմում է մարդկային հոգիների համար՝ փորձելով մշուշով պատել Զրիստոսի բերած ճշմարտության լույսը, որպեսզի մարդիկ չտեսնեն դեպի երկինք տանող ճանապարհը եւ խաբեության որոգայթներում մոլորվելով՝ զրկվեն երկնային արքայության հավիտենական կյանքից։



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ...



Սկիզբը՝ էջ 1

Չարը դադար չունի, գործում է օրսիբուն եւ գործում է մարդկանց միջոցով: Չարը ճանապարհ է հարթում, երբ կյանքում պակասում է նախանձախնդրությունը ճշմարտության հանդեպ, եւ սուտը գտնում է իր համակիրներին: Չարի խաբեպատիր ընթացքները գործնում են, երբ մարդը հեռանում է Զրիստոսի ուսուցանած սկզբունքներից՝ կյանքը լցնելով կեղծիքներով ու խեղաթյուրումներով: Այսպես է, որ իրողությունների ներկայացումը ձեւափոխվում է բանասարկության եւ անճիշտ գնահատականների, կրոնի ընկալման մեջ կամայական ու շահախնդիր մեկնաբանությունները ծնունդ են տալիս աղանդների, մարդու իրավունքի պաշտպանության պահանջով պարտադրվում են երբեմն նաեւ հասարակության մտածելակերպին ու արժեքամակարգին անհարիր բարքեր: Այսպես է, որ աշխարհում բարոյականությունը տեղի է տալիս ապարդյականության առջեւ, խոսքի ազատությունը վերածվում է խոսքի սանձարձակության, վկայությունը՝ ճշմարտության խեղումի: Ծճարտությունը նենգափոխելով՝ բաղաձայնական շահերը հաճախ հակադրվում են արդարությանն ու խաղաղությանը, կյուրակակի մոլուցքը, եսակենտրոն ձգտումները՝ գոյությանն ու մարդասիրությանը՝ աշխարհում բազմացնելով հակամարտությունները, վիշտը, կարիքն ու նեղությունները:

Կյանքն ալեկոծող այսպիսի իրողություններից աշխարհը կձեռքագատվի, երբ մարդիկ ընդունեն Զրիստոսի ճշմարտությունը, երբ իրենց հավատավոր գործերով վկայեն Տիրոջ ներկայությունը եւ առաքյալի պես բարձրաձայնեն. «Իմ մեջ կայ Զրիստոսի Ծճարտութիւնը» (Բ Կորնթ. ԺԱ 10): Ծճարտությունը կրելով միայն՝ մարդկությունը կարող է ապահովել կյանքի առաջընթաց, բարեփոխում, բարի արդյունք ու զարգացում, քանզի ոչինչ մնայուն չի կառուցվում խաբեության վրա, ո՛չ մարդկային հարաբերություններ, ո՛չ բարվոք հասարակական կյանք ու պետականություն: Երբ ճշմարտությունը մարդկանց մեջ չէ, արժեզուրկ են նվիրում, արդարություն, եղբայրսիրություն, բայց ճշմարտությամբ առնում են գործություն եւ գործի վերածվելու ուժականություն:

Մեր իրականության մեջ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, նույնպես, ցավոք, տեղ են գտնում վատաբանությունն ու բանասարկությունը, անտարբերու-

թյունը երկրի ընդհանուր բարիքի նկատմամբ: Նահանջ են ապրում ընտանեկան ավանդական արժեքները, դժվարությունների առջեւ՝ հանձնառության ոգին: Պատասխանատվությունը ստորադասվում է իրավունքին, անզուսպ պահվածքն ու վիրավորանքը ընկալվում են որպես քաջություն: Սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը հաճախ չի չարս է գործադրվում ճշմարտությունն աղավաղելու, կողմնակալ տեսակետներ տարածելու համար: Այսպիսի մտայնությանց մեջ սուտը քողարկվում է ճշմարտության դիմակով, բանավեճը դառնում է վիճաբանություն, քննարկումը՝ վերածվում քամահրանքի ու դատապարտության խոսքի, որոնցից հեռանում է Աստծո ճշմարտության Հոգին, Աստծո իմաստությունը, եւ մենք դժվարանում ենք, այո՛, նույնիսկ դադարում ենք տեսնել բարին, արդարը, ու մեր կյանքում տկարանում են միմյանց հանդեպ հավատն ու վստահությունը եւ զայիքի հույսն ու լավատեսությունը:

Բեթղեհեմում ծնված Մատնիկ է, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ, ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը: Նրան պիտի ապավինենք, մեր սրտերում Նրա ճշմարտությունը



կրենք, որ վերափոխվի մեր կյանքը, լցվի աներկյուղ վստահությամբ, դժվարությունները հաղթահարելու եւ ամեն բան Աստծո բարեբար կամքով ուղղելու գործությամբ: Ծճարտությունն ազատարար է: «Եւ կճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը կազատի ձեզ» (Յովհ. Ը 32),- ասում է մեր Տերը: Ապրենք ու գործենք Զրիստոսի ճշմարտությամբ, Նրա խոսքն ու պատգամները դարձնենք մեր կյանքի խավարացիր լույսը, մեր հանդեպ Նրա սերն ու ողորմությունը՝ մեզ միավորող ուժը, ազգի միասնությունը կերտող գործությունը: Անխախտ ու ամուր պահենք մեր միաբանությունը, համերաշխության ոգին, խնամք տանենք եւ հոգանք միմյանց համար, մեր երկրի, հոգեւոր եւ ազգային մեր կյանքի վերելքի համար: Միայն այսպես, միմիայն այսպես պիտի կերտենք շէն ու բարձր մեր Հայրենիքը: Միայն այսպես կարող պիտի լինենք Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը դարձնել մեր արդար դատի հաղթանակի հանգրվան եւ բարվոք, արդար լուծման առաջնորդել արցախյան հիմնախնդիրը: Այսպես կենսունակ պիտի պահենք Սփյուռքը, հույս ու ապավեն դառնանք եւ նեցուկ լինենք հավամարտության դժվարություն-

ները կրող սիրիահայ մեր եղբայրներին ու քույրերին: Եվ թող մեր բոլոր գործերը Տիրոջով լինեն:

Այս մաղթանքով, Սուրբ Ծննդյան ավետիսով Մեր ողջույնն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգեւոր դասին, մեր քույր Եկեղեցիների Հայրապետարկ հոգեւոր պետներին: Հայրապետական օրհնությամբ եւ Սուրբ Ծննդյան շնորհների հայցով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին եւ առաջին տիկնոջը: Մեր ողջույնն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: Աստվածակառույց Սուրբ Էջմիածնից, մեր Տիրոջ եւ Փրկչի

Հայրապետական օրհնության գիր սիրիահայությանը՝ Ամանորի եւ Սուրբծննդյան տոների առիթով

Ամանորի եւ Սուրբծննդյան տոների առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական օրհնության գրով իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն է ուղղել Սիրիայի հայ համայնքի հոգեւոր առաջնորդներին, աշխարհիկ ու հոգեւոր սպասավորներին, համայնքային պաշտոնեւորանքները, ազգային վարժարանների տեսչական ու ուսուցչական կազմերին, սաներին եւ համայն սիրիահայությանը:

«Այս օրերին, երբ քրիստոնյա աշխարհի հետ միասին համայն հայությունը պատրաստվում է նշելու Սուրբ Ծննդյան տոները, Մեր մտքում ու ամենօրյա աղոթքներում եք դուք, որ Սիրիայի ողջ ժողովրդի հետ միասին կրում եք երկրում ծայր առած հակամարտության ծանր ու անդառնալի հետեւանքները», - նշել է Վեհափառ Հայրապետ իր գրում:

Նորին Սրբությունն իր գնահատանքն է հայտնել հայորդիներին, որ հակառակ դժվարին իրավիճակի, ներկա վտանգների, անորոշության ու փորձությունների պայմանների, շարունակում են արթուն պահել իրենց հոգեւոր ու ազգային կյանքը եւ զորավոր՝ Նախանձախնդրությունը՝ մասնավորապես հանդեպ նոր սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության երախտարժան գործը:

«Սիրելի՛ հայորդիներ, սիրիահայ զաղուրթի պատմության մեջ բացառիկ դերակատարություն են կատարել հայկական վարժարանները, որտեղ կերտվել ու ձեւավորվել են հայորդյաց հոգիները, ներշնչվել մայրենի լե-

զովի եւ ազգային արժեքների հանդեպ սիրով ու նախանձախնդրությամբ: Կոտորածներից մազապուրծ ու եղեռն վերապրած ձեր հայրերը ամեն դժվարություն ու զոհողություն հանձն առան, որպեսզի իրենց զավակները ուսման կարողտ չմնան: Այսօր առիթ ունենք դրվատանքով անդրադառնալու, որ նախընթաց տասնամյակների ընթացքում Սիրիայի ազգային վարժարանները կրթել են փայլուն սերունդներ, ովքեր Սիրիայում եւ աշխարհի չորս ծագերում սփռված, ծառայում են մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, ավանդ բերում հայ մշակույթի, արվեստի, գրականության ու գիտության զարգացմանը:

... Վարժարանների սիրելի՛ սաներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք հղում ձեզ եւ աղոթում ձեր ու ձեր ծնողաց, Սիրիայի բոլոր մանուկների ապահովության համար: Թող ձեր ծնողների ու ուսուցիչների նախանձախնդրությունը՝ հանդեպ կրթության գործը, խրախույս լինի ձեզ համար, որպեսզի շարունակեք ջանադիր սովորել՝ ապագայում ձեր կյանքով ու հայրենաշեն գործերով ավանդ բերելու ազգային ու հոգեւոր մեր կյանքի առավել շինությանն ու պայծառությանը», - ասված է հայրապետական օրհնության գրում:

Նորին Սրբությունն Ամենակալ Աստծո գորակցությունն ու պահպանությունն է հայցել սիրիահայ համայնքի համար՝ մաղթելով, որ սուրբծննդյան խորհրդով բացվող 2014 թվականը խաղաղություն ու ապահովություն բերի Սիրիային ու Նրա ողջ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի պաշտոնեւորանքը

Հունվարի 8-ին Մայր Աթոռ Սրբաբանի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում գործող բոլոր բաժինների պաշտոնեւորանքը:

հատանքը հայտնեց Մայր Աթոռի աշխատակիցներին՝ նվիրյալ աշխատանքի համար՝ կարեւորելով յուրաքանչյուրի ծառայությունը Եկեղեցու առաքելության բարեհաջող իրականացման գործում, հորդորեց նույն ոգով եւ նախանձախնդրությամբ շարունակել ջանադիր ծառայությունը՝ ի պայծա-



Ամենայն Հայոց Հայրապետը, շնորհավորելով ներկաներին Ամանորի եւ Սուրբծննդյան բերկրաշատ տոների առիթով, իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց նրանց:

Նորին Սրբությունն իր գնա-

ռություն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու եւ ի բարօրություն հայ ժողովրդի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ նոր տարվա՝ 2014 թվականի անելիքներին ու ծրագրերին:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ 2013-ի թիվ 21-24


Իսկ Աղթամարի աթոռում այդ ժամանակ նույնպես շփոթ կացություն էր: Թովմայի մահից հետո, որ տեղի ունեցավ 1783 թվին, հիշատակվում են Կարապետ Վանեցին (1783 թ.), Մարկոս Շատախցին (1788 թ.), Հովհաննես Սպարկերտցին, Թեոդորոսը (1792 թ.), Միքայել Վանեցին (1796 թ.), հետո՝ Կարապետ Շատախցին, որին հասցնում են մինչև 1803 թվը: Սակայն Հավաքարանում 1783-1804 թթ. նշվում են միայն Միքայել Վանեցու և Կարապետ Վանեցի Ղրմբեսյանցի անունները: Ինչպես տեսնում ենք, մեծ շփոթ է տիրում այս հարցում՝ տեղեկությունների սակավության պատճառով: Համենայն դեպս, Մ. Օրմանյանն առաջնությունը տալիս է Հավաքարանի տվյալներին:

1783 թվից Աղթամարի կաթողիկոսներն օծվել են տեղում, և Ղուկասը չի կարողացել Աղթա-

մարի գործերով զբաղվել և պաշտպանել Ջահկեցու և Երեանցու ժամանակ հաստատված հարաբերությունները: Այդ վիճակին նպաստել է քաղաքական խառնակ կացությունը:

Երուսաղեմում 1775 թվին՝ խռովությունների շրջանում, հանկարծամահ եղավ պատրիարք Պողոս Վանեցին: Հնարավորություն չեղավ անգամ միաբանությունը կանոնավորապես հավաքելու և ընտրություն կատարելու: Ուստի խնդրեցին Կ. Պոլսի պատրիարքին ու մեծավորներին արժանավոր մեկին ընտրել ու ստանալ արքունական հաստատումը: Այս կերպ ընտրվեց Հովակիմ Զանաքեռցի եպիսկոպոսը, որ Կ. Պոլսում Երուսաղեմի փոխանորդն էր: Նա պետական հաստատում ստացավ 1775 թվի օգոստոսին, վերադարձավ Երուսաղեմ հոկտեմբերի 5-ին, իսկ միաբանությունն իր գոհունակությունը հայտնեց նոյեմբերի

24-ի գրությամբ: Հովակիմը պաշտոնավարեց մինչև 1793 թիվը՝ 18 տարի: Սկզբում նեղվեց լատիններից, որոնք կամենում էին տիրանալ հայոց գերեզմանատան մի մասին՝ 65 կանգուն երկարությամբ և 37 կանգուն լայնությամբ. ընդամենը՝ 2400 քառակուսի կանգուն հողակտորի: Լատինների հիմնավորումն այն էր, որ այնտեղ լատիններ են թաղված: Իրականում, երբ Ամեդո Ղեջենի շէյխը գրավել էր լատինների գերեզմանատունը, հայերը բարեկամաբար թույլ էին տվել լատիններին իրենց հանգուցյալներին թաղել հայկական գերեզմանատանը: Երկրորդ փաստարկն էլ այն էր, որ կաթոլիկացած հայ ընտանիքների հանգուցյալները նույնպես այդ գերեզմանոցում էին թաղված: Հայերը քիչ թե շատ պաշտպանություն գտնում էին Երուսաղեմի դատավորից՝ հենվելով մահմեդական ծերունիների վկայու-



թյունների վրա, իսկ լատիններն օգտվում էին Դամասկոսի փաշաների աջակցությունից և Ֆրանսիայի դեսպանատան ազդու միջամտությունից, որ Չաքարիան ի վիճակի չէր չեզոքացնելու: Որոշումը, վերջին հաշվով, նպաստավոր եղավ լատինների համար, և 1777 թվին հայոց գերեզմանատան այդ մասն անցավ կաթոլիկներին: Կաթոլիկները կամեցան սեփականել Բեթլեհեմ գյուղից դուրս գտնվող Զառասնից այդ կամ Կաթին այդ կոչված մատուռը, որը պատկանում էր երեք ազգի: Դատավորին մատուցվեցին մահմեդական ծերերի վկայությունները, և 1776 թվին

կաթոլիկների այդ ոտնձգությունը ձախողվեց:

Հովակիմը խնդիրներ ունեցավ նաեւ միաբանության ներքին կյանքում՝ վանքերի ինչքերի մատակարարության և սեփականությունների պաշտպանության հարցում: Լուրը մինչև Կ. Պոլիս հասավ, և պատրիարքն ստիպված էր զբաղվել դրանով: Չաքարիան, գործին վերջնական լուծում տալու համար, 1791 թվի հունիսի 23-ին ժողով գումարեց, որը յոթ կանոնից կազմված կանոնագիր հաստատեց: Երուսաղեմի միաբանության աշխատանքների դեկավարման համար: Դրանից հետո շատ ժամանակ անցավ, սակայն գանգատները վերջ չգտան: Ըստ որում՝ նոր կանոնների հաստատման անհրաժեշտությունը պահպանվեց: Չաքարիայի հաստատած կանոններով՝ Երուսաղեմի պատրիարքը կարող էր ունենալ վեց նազար՝ որպես օգնական, որոնք հսկելու էին ելեմուտին, հատույթները պետք է պահվեին երկաթե սնդուկի մեջ, որի բանալին պետք է լիներ նազարներից մեկի մոտ: Պատրիարքը և նազարներից մեկը, իրարից անջատ, ծախսերի համար հաշվեմատյան պետք է ունենային:

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ս. Ս. Օ. Ս. Ս. Գաբրելի Բ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմական երիտասարդական միությունների, հասարակական կազմակերպությունների և բուհական ուսանողական խորհուրդների անդամներին: Երիտասարդներն այցելել էին Մայր Աթոռ՝ շնորհավորելու Նորին Սրբությանը Ամանորի և Սուրբծննդյան տոների առթիվ և ստանալու հայրապետական օրհնությունն ու պատգամը:

Թողիկոսը: Նորին Սրբությունը մաղթեց, որ 2014 թվականը երիտասարդների համար լինի ուրախության, բերկրանքի ու հաջողությունների տարի: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Աստծո օրհնությունն ունենալով՝ երիտասարդները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի նոր տարին լինի օրհնության տարի ինչպես յուրաքանչյուր հայ անհատի, այնպես էլ ամբողջ հայ ազգի ու մարդկության համար: Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց երիտասարդներին՝ օգտագործել համայն հայության հոգեւոր կենտրոն այցելության այս առիթը՝ աղոթք բարձրացնելու Մայր տաճարում և վերա-

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահեց Ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հոգեհանգստյան արարողությունը

Հունվարի 8-ին Երեւանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում Ս. Ս. Օ. Ս. Ս. Գաբրելի Բ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահեց անվանի ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հոգեհանգստյան արարողությունը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց սգակիր ընտանիքին և ներկաներին.

«Խոր ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրյալ և արժանավոր զավակ, վաստակաշատ ճարտարապետ, ակադեմիկոս տիար Ջիմ Թորոսյանի մահվան մասին:

...Լուսահոգի Ջիմ Թորոսյանը ճանաչված է Հայաստանում և Հայաստանից դուրս՝ որպես ճշմարիտ մտավորական, տաղանդաշատ և երախտավոր ճարտարապետ: Նրա նախագծած շենքերը, համալիր կառույցներն ու կոթողները զարդարում են քաղաքամայր Երեւանը, հայրենի մեր երկրի տարբեր քաղաքներ և կրում են մեծ ճարտարապետի հայրենասկություն և ազգասեր ոգու վառ կնիքը:

Մենք մասնագետ չենք ճարտարապետության բնագավառի և Մենք չէ, որ պիտի գնահատական տանք շնորհալի ճարտարապետի արվեստին, սակայն այսօր, երբ վերջին հանգրվան են ուղեկցում նրան, ցանկանում ենք փոխանցել Մեր տպավորությունները և զգացումները, որ ունեցել ենք հոգեւորյա Ջիմ Թորոսյանի հետ շփումների և հարաբերությունների ընթացքում: Մեր հանդիպումներում մշտապես զգացել ենք խոհեմագարի մտավորականի վեհանձնությունը, օրինակելի բարեկրթությունը, ազնվությունն ու պարկեշտությունը, ում հետ մտերմությունն ուրախություն էր պատճառում և խորին հարգանք ու բարեկամական բարի զգացումներ ներշնչում: Նա կենտուրախ էր ու լավատես և միշտ լեցուն և նոր մտահղածությունով: Բարեհիշատակ Ջիմ Թորոսյանն ապրում էր ստեղծագործական մշտական երկունքի մեջ և իր նախագծերը ստեղծում էր ազգային արժեքների խոր ընկալումով: Արդիականի և ազգային բարձրաճաշակ համադրությամբ ու բարձր վարպետությամբ՝ նա ձգտում էր միշտ կատարելության հասցնել իր աշխատանքները՝ կերտելով նոր ժամանակների հայ ճարտարապետության հիմնալի կոթողներ: Առանձնահատուկ գրավչություն ունեն հանգուցյալի բացառիկ տաղանդով ստեղծված, ոգի, ներշնչանք ու քաջալերություն հաղորդող նրբաճաշակ զարդաքանդակները:




Ջիմ Թորոսյանի շնորհաց դրոշմն են կրում նաեւ նրա նախագծած եկեղեցական կառույցները՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մուտքը և բացօթյա խորանը, Սբ Վարդան - Սբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը, Գեորգյան հոգեւոր ճեմարանի նոր մասնաշենքը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, ստալինյան բռնատիրության տարիներին նահատակյալ հոգեւորականաց հուշապատը: Գովարժան է մեծանուն հայորդու տասնամյակների մանկավարժական բերուն գործունեությունը: Նրա ոգու և շնչի ներքո ճարտարապետների նոր սերունդներ են կրթվել, ովքեր շարունակելու են լուսահոգի Ջիմ Թորոսյանի ավանդներով ստեղծագործել ու արարել՝ ի շինություն մեր հայրենի երկրի:

Ջիմ Թորոսյանը ճարտարապետական իր մեծ ավանդի ու վաստակի համար արդարորեն արժանացել է բազմաթիվ պարգևների: Անվանի ճարտարապետի կուրծքը զարդարել են նաեւ Առաքելական մեր Սբ Եկեղեցու՝ «Սբ Սահակ - Սբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով՝ ի գնահատություն նրա գովարժան ներդրումի՝ որպես Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ճարտարապետական խորհրդի ատենապետ, և հայ մշակույթին ու ճարտարապետությանը մատուցած երախտարժան ծառայությունների համար:

Ցավալի կորստի այս պահին ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված՝ մեր ժողովրդի վաստակաշատ զավակի հոգու հանգստության և խաղաղության համար և հայցում, որ Բարեգութ Տերը երկնից լուսեղեն խորաններում ընտրվի անմահ հոգին նորոգ հանգուցյալ սիրելի Ջիմ Թորոսյանի: Եվ թող միխթարիչ Սուրբ Հոգին սփոփի վշտացյալ սրտերը սգակիր Թորոսյան ընտանիքի անդամների, հարազատների և մտերիմների:

Խուսկ, աղոթք և օրհնություն լուսահոգի Ջիմ Թորոսյանի պայծառ հիշատակին»:



Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ Եկեղեցու երիտասարդաց միավորման կենտրոնական գրասենյակի տնօրեն Գեորգ Սկրտչյանը՝ ներկա երիտասարդության անունից շնորհավորելով Վեհափառ Հայրապետի Ամանորն ու Սբ Ծնունդը: Այնուհետև Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ Եպս Գալստանյանը խոսքով դիմեց երիտասարդներին՝ նշելով, որ նրանց բազմաքանակ ներկայությունը Մայր Աթոռում նոր լիցք ու զգացումներ է հաղորդում բոլորին՝ շարունակելու իրենց աստվածահաճո կյանքը և կերտելու հայ ժողովրդի լուսավոր ու պայծառ ապագան:

Միջոցառումը հոգեւոր ու ազգային երգերի զեղեցիկ կատարումներով զարդարեց Գեորգյան ճեմարանի երգչախումբը:

Ապա երիտասարդներին իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կա-

նորոգելու իրենց ուխտն Աստծո հետ, քայլելու Տիրոջ պատվիրանների համաձայն և իրենց եկեղեցասեր ու ազգանվեր կյանքով նպաստելու հայրենիքի առաջընթացին ու ժողովրդի բարօր ապագայի կառուցմանը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին 2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ Եկեղեցու կողմից տարվող աշխատանքներին, Ցեղասպանության գոհերի սրբադասմանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համագործակցությանը, Եկեղեցու քարոզչական գործունեությանը, սիրիահայ համայնքի ներկա կացությանը և սիրիահայությանը ցուցաբերվող զորակցությանը, բանակում իրականացվող հոգեւոր սպասավորությանն ու եկեղեցի-պետություն հարաբերություններին:

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ 2013 թ. թիվ 22-24

Ժամանակակից կյանքի դրամատուրգիական խոր յուրացումը հեշտ խնդիր է: Բայց եւ առանց այդպիսի յուրացումների անհնար է պատկերացնել ոչ միայն թատրոնը, այլեւ գրականությունը: Պակասում է քաղաքացիական, մարդկային ուժեղ նկարագրի տեր անհատների ներաշխարհի բացահայտումը: Նրանք ավելի շատ երեւում են գործողությունների հարահոսի մեջ, մինչդեռ գործողության հետ մեկտեղ պետք է լինել նաեւ վերլուծությունը՝ մարդուն ճանաչելու միակ միջոցը: Եվ ապա՝ զգացվում է կենսական սուր հարցադրումների, հանրային մտահոգությունների շրջանցում կամ անհարկի պարզեցում, որ երբեմն հասցնում է բացահայտ պարզուսակացման:

1960-1980-ական թթ. հայ թատերգության տեսադաշտում է ոչ միայն ժամանակակից կյանքը, այլեւ **պատմական անցյալը**՝ հնագույն ժամանակներից մինչեւ 20-րդ դարի ճակատագրական ու բախտորոշ իրադարձությունները: Անցյալի նյութը, ինչպես ասվեց, գլխավորապես պատկերվում է դրամայի տեսակով: Եզակի բացառություններից է Գ. Հարությունյանի «Ղազարը գնում է պատերազմ» կատակերգությունը, որի մասին խոսվեց:

Մատենագրության շրջանից՝ 5-րդ դարից սկսած, պատմությունը մշտական գրանցում ունի հայ գրականության մեջ: Պատմական եւ պատմականագրական վեպերի հանդեպ ժողովրդի ունեցած հետաքրքրությունն իր հարցասիրությունների պատասխանը բնականորեն պիտի որոնել նաեւ թատրոններում՝ կենդանի ներկայացումների մեջ: Այդ պահանջը բեմական կյանք տվեց Բաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գեորգ Մարգարետունի», Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ս. Խանզադյանի «Մխիթար սպարապետ» պատմավեպերին:

Ահա այդ հոգեւոր պահանջն այս տարիներին ասպարեզ հանեց պատմական ոչ քիչ թվով թատերգություններ:

Ա. Արաքսմանյանի «Արիստոտելի երկար թուլությունը» (գեղարված «Հրդեհ» գրքում, 1984) դրամայում ոգեկոչվեցին Զ. Ժ. Կ. 4-րդ դարի դեպքեր: Հերոսներ ընտրելով Արիստոտելին, Ալեքսանդր Մակեդոնացուն, Արիստոտելի քրոջ որդի պատմիչ Կալիսթենեսին՝ հեղինակը պատկերում է երիտասարդ աշխարհակալի դաստիարակության, ապա եւ գործունեության բարդ ժամանակաշրջանը: Կերպարները կերտված են

դրամատիկական եւ ողբերգական իրավիճակներում: Ալեքսանդր Մեծի նվաճողական բարքերն ու փառքի այրող տենչը եւ կեցության ճշմարիտ ուղու ընտրությունը՝ հանձնիս նրա ուսուցիչ Արիստոտելի եւ պատմիչ Կալիսթենեսի բարոյական ըմբռնումների, կանգնում են դեմ հանդիման: Թվում է, թե հաղթողը ուժն է, ճնշումը, բայց դա միայն պահի մեջ, հավիտենականության համար հաղթողը բարոյական ճշմարտությունն է:

Նույն այս հարցն է արծարծված նաեւ **Պ. Չեյքունցյանի** «Աստծո տասներկու օրը» (1978) դրամայում՝ գրված, ինչպես հեղինակն է հուշում, «քստ հայոց պատմության մոտիվների»: Ժամանակը Զ. Ժ. Կ. 1-ին դարն է, գլխավոր հերոսները՝ Հայոց արքա պայմանական անունով հանդես եկող Տիգրան Մեծը եւ Միհրդատ Պոնտացին: Սա Հայաստանի հզորության շրջանն է, երբ Պարսկաստանի ու Հռոմի միջեւ բարձրանում է եւ հայոց աստղը, երբ, ինչպես հեղինակն է ասում, Հայաստանը ոչ թե խաղաղություն էր «մուրում», այլ՝ խաղաղություն «պարտադրում»: Հեղինակը պատմության դասերի քննությանը արծարծում է ուժի ու բարոյականության առաջնության

հարցը, որ ժամանակների հիշողության համար արձանագրում է հեղինակի ձայնափողը դարձած Պատմիչը: Դա նաեւ հնարավորություն է՝ ճշտելու հայ ժողովրդի պատմական ուղու փիլիսոփայությունը, ժողովուրդ, որն անգամ իր ուժերի վերելքի շրջանում ապավինել է բարոյականությանը եւ ոչ թե ուժին: Ահա Պատմիչի, այսինքն՝ պատմության անխաբոյալ վկայի խոսքը. «Աշխարհի երեսից բոլոր ուժերը վերացան, չկան ոչ Բաբելոն, ոչ Ասորեստան: Կմա միայն նա, ով բարոյականությամբ է առաջնորդվում» («Ամենատխուր մարդը», ժողովածու, 1981, էջ 151): Ըստ պատմիչ-հեղինակի՝ ոչ թե հարձակվողն է կրում բարոյականությունը, այլ՝ պաշտպանվողը: Սա ուժի դեմ ընդվզելու միջոց է:

Այս ընդվզումն է բնորոշում նաեւ **Ն. Չարյանի** «Արտավազդ եւ Կլեոպատրա» (1970) «պոեմ-ողբերգության» իմաստային շեշտը: Սա արդեն անկման շրջանն է: Մեծ Տիգրանի որդին՝ Արտավազդը, պարտվում է Անտոնինոսին, գերեվարվում եւ որպես ընծա՝ մատուցվում Կլեոպատրային: Ուժի դիմաց դարձյալ մնում է բարոյական հաղթանակը, որը ոչ միայն պաշտպանվողի հաղթանակն է:



Նակն է ընդդեմ նվաճողի, այլեւ արդարության հաղթանակը՝ ընդդեմ անարդարության: Չմոռանալ, որ Արտավազդը եղել է առաջին հայ թատերագիրը: Նա պատմությանը նայում է ոչ թե սոսկ իբրեւ արքա, այլեւ իբրեւ մտածող ու իմաստուն:

Երկրի քաղաքական ու բարոյական հզորության ցանկալի միասնության ձգտումը, բայց իրական մասնատվածության առկայությունը, իրենց հերթին ստեղծում են ողբերգական նոր իրադրություններ՝ բնորոշ հայոց պատմության 4-5-րդ դարերին:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂԻՎԱՍ Կ ԿՎՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ էջ 3

Կառուցումները պետք է նազրկներ իրոշմամբ կատարվեին: Ջուխաչի կոչվող գործակալը տեսր պետք է ունենար՝ տվածն ու ստացածը գրանցելու համար: Դա ընդհանուր ծախսարարն էր: Առանց նազրկների համաձայնության՝ ոչ միաբան կարող էր ընդունվել, ոչ էլ՝ արտաքսվել: Բոլոր գործակալներն ու նվիրակները նազրկների հավանությամբ պետք է նշանակվեին: Առանձնաշնորհյալ միաբաններ չպետք է լինեին: Երբ մահացած միաբանների ունեցածներն անցնում էին ջուխաչուն, նա պետք է դրանք տնօրինել խորհրդականների, այսինքն՝ նազրկների հավանությամբ: Պատրիարքի ծախսերը, տված պարգևները, գանձած կոնդակադրամները եւ այլ նվերները պետք է ընկնեին առնվեին նազրկների կողմից: Պատրիարքը նույնը պահանջելու է իր գործակալներից, եւ ոչ ոք չպետք է ընդդիմանար պատրիարքին: Կանոններն ուղարկվեցին Երուսաղեմ: Երկու պատգամավոր էլ ուղարկվեց՝ կանոնների գործադրությանը հսկելու: Վեց նազրկներ նշանակվեցին Կ. Պոլսի կողմից: Դրանք էին՝ Սարգիս, Ավետիք, Չաքարիա, Կարապետ, Պետրոս Եպիսկոպոսները եւ Մարտիրոս վարդապետը, որոնք միաբանության երիցագույններն էին:

Ընտրված պատգամավորները, հավանաբար, նույնպես եկեղեցականներ, Երուսաղեմում պարզեցին իրերի վիճակը, ժողով գումարեցին, կանոնների ու հպատակության պարտաթուղթներով: Կատարվեցին կանոններով հաստատված քայլերը: Վեց նազրկները գործի անցան:



Մարտիրոս վարդապետը կարգվեց գանձապահ եւ ստացավ երկաթե սնդուկի բանալին, Պետրոս Եպիսկոպոսը հաշվակալ նշանակվեց, որոշվեցին գործակալները, ջուխաչու հաշիվը պարտադրեցին եւ տոմարները կարգադրեցին: Խնդիրը, սակայն, սրանով չփակվեց, քանզի դրամի մեծ պակասություն կար, իսկ կանոնները դրամի հարց էին լուծում: Աթոռը մեծ պարտքեր ուներ: Նա պետք է իշխանություններին տարեկան տուրքը մոծեր, սակայն միջոցներ չուներ: Խառնաշփոթ ժամանակների պատճառով պակասել էին ուխտագնացությունները, եւ դրանով իսկ հասույթները: Թուրքահայերը, հակառակ խոստումների, որոշակի օգնություն էին կարողանում ցույց տալ, քանի որ իրենց վիճակն էլ էր ծանր: Դիմեցին Ռուսաստանի եւ Վրաստանի բարեկեցիկ ազգայիններին, Եկատերինա կայսրուհուն եւ Հերակլ թագավորին, եւ այդ ամենը կազմակերպում էր Հովակիմ Զանաքեռցի պատրիարքը: Հոգեւոր ընծա-

ներ էլ պատրաստվեցին, եւ հատուկ նվիրակներ ուղարկվեցին այդ կողմերը: Հովակիմն արդեն ծեր էր՝ կուրացած, եւ շատ չանցած՝ 1793 թվի սեպտեմբերի 25-ին՝ Վարագա խաչի կիրակի օրը, մահացավ: Երկուշաբթի նրան հողին հանձնեցին Սբ Փրկչի վանքում, որի համար ինը քսակ դրամ կաշառք տրվեց դատավորին:

Միաբանությունը Հովակիմի հաջորդ ընտրեց Պետրոս Եվդոկացի Եպիսկոպոսին, որը դարձել էր վանքի հաշվակալը: Նա նաեւ Սբ Հակոբի փակակալը կամ լուսարարապետն էր: Սարգիս Կուզիկյան Եպիսկոպոսը եւ ծերունակազոր Մարտիրոս վարդապետը, որ ազդեցիկ, բանգետ եւ տաճկագետ անձ էր՝ աթոռի գործերին քաջատեղյակ, Պետրոսին ստիպեցին համաձայնել ընտրությանը եւ Մելքոն վարդապետի ձեռքով պաշտոնադրելու ուղարկեցին Կ. Պոլիս: Չաքարիան եւ մեծամեծները դրան հավանություն տվեցին եւ ձեռք բերեցին արքունական հաստատումը, որն ուղարկվեց Երուսաղեմ, եւ 1794 փետրվարի 14-ին՝ Տյառնընդառաջի տոնին, Պետրոսը պատրիարքական աթոռ բարձրացավ: Նա վերստին հաստատեց կանոնագիրը եւ դիմեց Կ. Պոլիս, որ պատրիարքարանը որոշի իր վեց խորհրդականներին, քանի որ նախկինների մի մասը մահացել էր, իսկ Մարտիրոս վարդապետն էլ տկարացել էր: Նա դրամական մեծ դժվարություններ կրեց Սբ Հարության իսլամ դռնապաններից, Դամասկոսի փաշայից, Յուպպեի մաքսապետից եւ Երուսաղեմի այլազգիներից՝ նրանց ըմպած պահանջների պատճառով: Նա դիմեց Չաքարիայի օգնությանը, որ արքունի հրամանգ-

րով դրանք զսպվեին, սակայն տուգանքներից լրիվ ազատվել չկարողացավ: Ծախսերի ու մտահոգության պատճառ դարձավ գմյունիացի ուխտավորների նավի՝ Տրիպոլիս խորտակվելը: Ուխտավորներից 8-ը խեղդվեցին, իսկ 52 փրկվածներին Երուսաղեմ հասցնելու համար Պետրոսը հատուկ մարդ ուղարկեց եւ հոգաց նրանց բնակությունը վայրերը վերադառնալու ծախսերը: Իսլամների ձեռքով Սբ Հարության տաճարի այրվելը ծախսերի նոր դուռ բացեց: Փայտե հին դռները փոխարինվեցին երկաթե դռներով՝ երեք ազգերի համընդհանուր ծախսով:

Ավելի աղետալի եղավ ֆրանսիացիների արշավանքը Եգիպտոս, որը 1517-ին՝ սուլթան Սելիմի օրոք, կայսրության մաս էր կազմել: Դրանով Սելիմ Ահեղը դարձել էր խալիֆ, այսինքն՝ մահմեդականների կրոնապետ, այսինքն՝ մարգարեի հաջորդ: Եգիպտացի տիրակալները կայսրության մեջ առավել առանձնաշնորհյալ կացություն ունեին եւ հավասարապես բռնանում էին եւ տեղացիների, եւ օտարների վրա: Վերջին շրջանում Եգիպտոսի կուսակալն Իսմայիլ բեյն էր, որին հաջորդեց օսման բեյ Թաբեղը, որի ապիկարության մի դրսեւորումն էլ եղավ բոլոր գործերն Իբրահիմ բեյ եւ Մուրադ բեյ բռնապետներին հանձնելը, որոնք տեղացիներին կողոպտելուց հետո անցան օտարներին: Դա իր վրա հրավիրեց Եվրոպայի ուշադրությունը: Նապոլեոն Բոնապարտը 1797 թվի հոկտեմբերի 17-ին Կամպոֆորմիայի պայմանագրով խիստ ընդարձակեց Ֆրանսիայի սահմանները՝ հաղթելով Ավստրիային եւ դեպի Արեւելք տարածվելով, տիրեց նաեւ Հունիական կղզիներին: Նրա մեջ ծագեց նաեւ Եգիպտոսի տիրաւալու եւ ճանապարհների բանուկ խաչներուն իր ձեռքը վերցնելու միտքը: Նա մեծ նախապատրաստություններ տեսավ Տուլունի նավահանգստում, որ-

տեղից 1798 թվի մայիսի 19-ին 100 առագաստանավով, 10000 ծովայինով եւ 40000 զինվորով, գիտականների մի մեծ խմբով եւ 400 բեռնաբար նավով ճանապարհվեց Եգիպտոս: Ծանապարհին հունիսի 12-ին տեղի ասպետներից գրավեց Մալթան, հուլիսի 1-ին հասավ Եգիպտոս, 2-ին բանակով ափ դուրս եկավ եւ 3-ին մտավ Ալեքսանդրիա: Ասորիքն ու Պաղեստինն իրար խառնվեցին, մարդիկ հիշեցին խաչակիրների ժամանակները: Մահմեդականների ատելությունը քրիստոնյաների նկատմամբ ուժեղացավ եւ կեղեքումների պատճառ դարձավ: Երուսաղեմում էլ պաշտոնական անձինք եւ տեղացի մեծամեծները խորհուրդներ կազմեցին եւ սկսեցին բռնանալ այլադավանների, օրթոդոքս ուղղափառների եւ կաթոլիկների վրա: Նախ սկսեցին գնքեր փնտրել եւ գտնել, վերցրեցին եկեղեցիների բանալիները, գնված պահակներ դրեցին, որի արդյունքում գոյությունն ու հափշտակությունը չափ ու սահմանն անցան: Սպառնում էին անգամ կոտորածներով: Զրիստոնյաների փոխանորդ եւ թարգման վարդապետները բանտ նետվեցին՝ որպես պատանդներ: Մի պահ, կարծես, հանգստություն տիրեց, որի պատճառը, իբր, արշավանքի ոչ ստույգ լինելն էր: Բռնություններ տարածվեցին նաեւ մյուս քաղաքներում, հատկապես՝ Յուպպեում: Սակայն պարզվեց, որ արշավանքն անստույգ չէ, եւ բռնությունները շարունակվեցին ավելի մեծ թափով ու չափով: Զրիստոնյաներից (հայ, լատին եւ հույն) գումարներ էին պահանջում, 170 եկեղեցականի բանտարկեցին Սբ Հարություն տաճարում, որտեղ շատերը իվվանդացան: Շատ եկեղեցիներ փակվեցին, արգելք դրվեց անգամ թաղում անելու վրա:

Շարունակելի
Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳԿԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր

ԼԵՃՎԱՐՏԱՆԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ԿԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՉԱՆԳԻ» ԿԱՎԵԼՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ 2013 թ. թիվ 24

«Չանգին» Արովյանը գրել է մեծ պարոսով, անասելի լարվածությամբ, ասես շունչը պահած: Հատկապես այս գլխում է, որ շատ ավելի տեսանելի են դառնում վեպի «Հաղաթափում» ասված խոսքերը, ուր Արովյանն իրեն համեմատում է Կրեյտս թագավորի որդու հետ, ում փակ լեզուն իր «կապը կտրել» էր, այսինքն՝ բացվել էր ու խոսել: Ստեղծագործական այդ բուն կրքի ու լարվածության դրսևորումն արտահայտվել է հախուռն ոճով, երկար ու ձիգ նախադասությունների, անսովոր ու անօրինակ պատկերների կուտակումներով: Այս հատվածում Արովյանը շարահյուսական, ոճական տարբեր հնարանների օգնությամբ ընդգծում ու ավելի ցայտուն է դարձնում հայ ժողովրդի քաղաքական կացությունը, նրա հույսերն ու սպասելիքները: Հայաստանի գալիքի խորհրդանիշ ծանայող գետի տարածության այլաբանական պատկերումներով՝ գետը որպես ամենի գազան, որպես երկնային երեսույթ, որպես «հազարավորների» մարմնացում, որպես ազգ եւ այլն, ընդգծում է այն ամենի ուժը, որ ներփակված է իր սիրելի ժողովրդի ծոցում:

Արովյանը պատկերակերտման մեծ վարպետ է, եւ կարելի է ասել, որ բնության երեւոյթների նկարագրությունը նրա ոճի հիմնական հատկանիշներից մեկն է, նրա անբաժանելի մասնիկը, որի շնորհիվ էլ «Չանգին» հավելվածում բնության տեսարանները հասնում են գեղարվեստական կատարելության: Դրանք, իհարկէ, ինքնանպատակ չեն, այլ սերտորեն առնչվում են վեպի գաղափարական բովանդակությանը: Առաջին իսկ հատվածում մեր աչքի առջեւ հառնում է Չանգին՝ իր ողջ հզորությամբ, անպարտելիությամբ, թշնամուն ունենալով տալու, ոչնչացնելու մոլուցքով: Այս հատվածում Արովյանը դիմել է լեզվական աստիճանավորման, որտեղ յուրաքանչյուր հաջորդող բառի կամ արտահայտության իմաստի բարձրացմամբ, նույնանիշների, հոմանիշների, նմանաձայնու-

թյունների օգտագործմամբ ընդգծվում է նկարագրվող երեւոյթի հաջորդական, աստիճանական զարգացումը, եւ պատկերին տրվում սաստկական երանգավորում: «Հրով, սրով, բոցով, բրով, փռնչալով, մռնչալով, թնդալով, դողդալով Կաքավասարի տակիցը, որ ական թոթափելով դուս չի պրծնում, վագում ու հրով, սրով, բոցով, բրով, փռնչալով, բռնչալով ճռնչալով սասանահար գետինը պոկելով, պռնկելով, քրքրելով, քրքրվելով, սրսրացնելով, վրվրացնելով որ չի գալիս ամենի Չանգին ու Ձորագետ մտնում, որ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին տապալի, փշրի, ավերի, քարեքար, պատեպատ տա քշի, տանի, սրբի, ողողի ...»:

Գետի նկարագրությունը տեսանելի է դառնում պատկերավորման ու արտահայտչական տարբեր միջոցների գործառնության շնորհիվ, որոնցից առավել հաճախ գործածվում են մակդիրները, անձնավորումը, շրջաբերությունը, բառային կրկնությունները: Մակդիրների կիրառությունը կարեւոր է խոսքին պատկերավորություն հաղորդելու եւ հեղինակի մտահղացումը պարզելու առումով: Մակդիրների միջոցով գրողը բնութագրում, բնորոշում է նկարագրվող երեւոյթը կամ առարկան, անհատականացնում այն: Մակդիրը միաժամանակ բացահայտում է հեղինակային վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ:

Մակդիրները գերակշիռ դեր ունեն հատկապես «Չանգին» գլխի առաջին մասում, օրինակ՝ *արինաշաղախ բերդ, կրակված աչքեր, ոսկորաշեն բուրջ, դառնավարամ սուգ, քարակոշկոճ որդիք, վճռահատ բարբառ, քերովբեական լեզու* եւ այլն, որոնց մի մասը Արովյանի մտքի ծնունդն է, նրա կողմից է միայն օգտագործվել: Այս առումով ուշագրավ է այն, որ եթե, ասենք, «կրակված աչքեր» արտահայտությունն իր կիրառությունը գտել է հետագա շատ գրողների բառապաշարում, ապա «ոսկորաշեն բուրջ», «քարակոշկոճ որդիք» եւ այլ բնութագրումներ հետագայում կիրառություններ չեն գտել մեր գրականության մեջ:

Այս հատվածին բնորոշ է նաեւ կոչականների կուտակումը, որն ավելի ընդգրկում ու կենդանի է դարձնում խոսքը. «Չանգի՛, Երա՛սխ, Հրազդա՛ն, Արա՛գ, կաթնահա՛մ ստինք մօր իմոյ սիրելոյ եւ գորովագութ ծնողի՛ Մեծի՛նն Հայաստանի» կամ «Դուսի՛ա՛, հզօ՛ր բազուկ եղիցի ձեզ նիզն, Վօլգա՛յ, ի՛մ մեծ քեռ, ես լ իմ քոյր Երասի՛ա» եւ այլն:

Գետի արագահոսության տպավորությունն Արովյանը ստեղծել է բնաձայնական բառերի կուտակմամբ, օրինակ՝ փռնչալ, մռնչալ, ճչալ, ճռնչալ, դողդալ եւ այլն, իսկ հարատեւ հոսքի ընթացքը՝ երկարաշունչ նախադասությունների կազմությամբ: Օրինակ՝ «Չանգին» գլխի առաջին չորս էջը բաղկացած է ընդամենը հինգ նախադասությունից:

«Չանգին» գլխում օգտագործված հոմանիշները ոճական բազմապիսի երանգավորումներ ունեն: Լեզվաբան Լ. Եգեկյանը նկատել է տալիս, որ «Արովյանի վեպում հոմանիշները մի փոքր այլ գործառնությամբ ու կիրառություններ ունեն: Բանն այն է, որ հոմանիշների գործածությունը այստեղ նախ եւ առաջ պայմանավորված է տվյալ ժամանակի գրական լեզվի վիճակով: Եթե գեղարվեստական մյուս երկերում հոմանիշները հիմնականում գործ են ածվում խոսքի պատկերավորության ու արտահայտչականության նպատակով, ապա այստեղ հոմանիշային զույգերը, ավելի հաճախ հանդես գալով իբրեւ նույնանիշների, վերցվում են լեզվի տարբեր ոլորտներից՝ մեկը մյուսի իմաստը պարզաբանելու, բացահայտելու նպատակով»: Գիտնականը նկատի ունի այն հանգամանքը, որ Արովյանը եթե որեւէ հասկացության համար օգտագործել է լեզվական որեւէ փոխառություն կամ օտար արտահայտություն, դրա կողքին իբրեւ լրացուցիչ բացատրություն տվել է այդ բառի կամ արտահայտության գրական համարժեքը, իսկ երբեմն էլ՝ հակառակը. գրական հոմանիշը «բացատրվել է» օտար լեզվից փոխառությամբ, օրինակ՝ հանգիստ-խաթըշամ:



«Չանգին»-ում հոմանիշային շարքի երկու եւ ավելի բառեր հաճախ համատեղ են հանդես գալիս, որով եւ ընդգծվում է կարեւոր նշանակություն ունեցող հասկացությունը. այն ներկայացվում է իմաստային նոր նրբերանգով: Առկա են նաեւ բնաձայնական բառերի հոմանիշային շարքեր, օրինակ՝ փռնչալով-մռնչալով-խռնչալով, պոկելով-պռնկելով, սրսրացնելով-վրվրացնելով եւ այլն:

Արովյանի ոճի կարեւորագույն առանձնահատկություններից է հոմանիշ եւ նույնանիշ բառերի կուտակումը, որով նրա ոճն ասես հարագատանում է Նարեկացու ոճին: Արովյանն ուղղակի կամ անուղղակի փոխարկումներով ժառանգել է հայ մտքի ու լեզվի ժամանակային երկար շրջանի շատ խտացումներ ու արտահայտչաձեւեր, ուստի նրա բառաշխարհի անհատականացումը բաղդատելի է այնպիսի մի մեծության հետ, ինչպիսին Նարեկացին է: Այդ զուգահեռը կամ ծագումնաբանությունը զգալի է ամենաանսպասելի համատեքստերում: Նարեկացու լեզվաոճական տարրերի այս առկայությունը բացատրելի է Արովյանի խառնվածքով, վեպը գրելու ոգեւորությամբ, մարդկային զգացումների առատությամբ, որոնք ստեղծագործելու պահին ինքնամոռացության են տարել հեղինակին:

Շարունակությունը՝ էջ 8

Մարկելլին ՕԼԵՄՆԻՃԿԻ

Սկիզբը՝ 2013-ի թիվ 24


ա) Հասարակական պարտականություններ

Մարդը կոչված է ոչ միայն երկնային կյանքին արժանանալու եւ Աստծուն ծառայելու, այլեւ երկրային կյանքով ապրելու եւ ծառայելու հասարակությանը: Նախ եւ առաջ պետք է երկրային կյանքում ծառայել մարդկությանը՝ նախապատրաստելով սեփական անձը երկնային կյանքին եւ Աստծո ծառայությանը: Այս առումով յուրաքանչյուրը պետք է ընտրի որոշակի մասնագիտություն կամ ծառայության ոլորտ՝ օգտակարություն բերելով հասարակությանը: Պողոս առաքյալն ասում է. «Ով չի ուզում աշխատել, թող հա՛ց էլ չուտի» (ԲԹԵՎ. Գ 10): Սուրբ Գրքը պատգամում է ծառայել կամ Աստծո շնորհները մատակարարել մեկ մեկու (Ա ՊԵՏ. Դ 10), վարել իմաստուն տնտեսություն (Ղուկ. ԺԲ 42), տալ այն գործունեից, որ Աստված է շնորհել (Ա ՊԵՏ. Դ 11), եւ քանի դեռ արեւը մայր չի մտել, աշխատել (Հովհ. Թ 4): Ցանկացած պաշտոնյա ծառայում է ոչ միայն հասարակությանը, այլեւ կատարելագործում սեփական անձը՝ միաժամանակ իրական հաճույք ստանալով: Գործագուրկ կամ անգործ մարդը մատնվում է անիմաստ կյանքի

ՎՐԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՐՔՎՏՈՒԹՅՈՒՆ

եւ ծուկության, որի մասին Պողոս առաքյալն ասում է. «Լսում ենք, թե ծույլ կյանքով են ապրում ձեզնից ոմանք, որեւէ գործ չեն անում, ծույլ-ծույլ շրջում են՝ դատարկ բաներով հետաքրքրվելով» (ԲԹԵՎ. Գ 11):

Պաշտոնի կամ մասնագիտության ընտրությունը կախված է մարդու ընդունակություններից, երբեմն էլ՝ կյանքի հանգամանքներից, որոնցում հարկ է տեսնել Աստծո նախախնամությունը: «Մեկին տվեց հինգ քանքար, մյուսին՝ երկու, եւ մի ուրիշին՝ մեկ» (Մատթ. ԻԵ 15): Ծնվելով տարաբնույթ պայմաններում՝ մարդիկ ստանում են տարբեր կրթություն: Կարելի է ոչ թե պաշտոնն է կամ մասնագիտությունը, այլ՝ այդ ծառայության ոլորտում ազնիվ աշխատելը, որի համար Տերը պարգև է խոստանում. «Քիչ մեջ հավատարիմ եղար, շատի վրա կկարգեմ քեզ» (Մատթ. ԻԵ 21): Ծառայության հանդեպ նվիրվածությունը պահանջում է քրտնաջան, բոլորակողմ եւ մանրակրկիտ աշխատանք: Սրա հետ մեկտեղ պետք է հաղթահարել նաեւ աշխատանքային խռնդնորոնները: Պետք է գնահատել սեփական աշխատանքը (չթերագնահատելով ուրիշներին) եւ դրան վերաբերվել իբրեւ Աստծուն մատուցվելիք ծառայության (Հռոմ ԺԴ 8, Կող. Գ 17): Հավատարիմ չէ նա, որ ա-



նընդհատ փոխում է աշխատանքը: Այս պատճառով Պողոս առաքյալը կոչ է անում. «Յուրաքանչյուր ոք, ինչ կոչման մեջ որ էր, երբ կանչվեց, թող նրանում էլ մնա» (Ա Կորնթ. Ե 20): Եթե աշխատանքը ծանր է եւ անհետաքրքիր, ապա պետք չէ փախչել դրանից, այլ հարկավոր է առավել ճիգ եւ եռանդ գործադրել՝ այն դարձնելու թեթեւ եւ սիրելի: Եթե մարդը կարողանում է աշխատանքում ինքնուրույնություն դրսևորել, ապա այդ ժամանակ ծառայությունը դառնում է հետաքրքիր եւ հաճելի: Ով ցանկացած դժվարության պատճառով կարող է թողնել իր աշխատանքը, այլ աշխատանքում եւս անպի-

տան կլինի: Եթե ծառայության մեջ իրապես շատ դժվարությունների ենք հանդիպում, ապա պետք է հիշենք Աստծուց տրված «անեծքը». «Զո երեսի քրտինքով ուտես հացդ մինչեւ հող դառնալը» (Մեկ. Գ 19): Այս պատգամը վերագրվում է ոչ միայն հողագործներին եւ արհեստավորներին, այլեւ՝ ուսուցիչներին, նկարիչներին, եկեղեցականներին եւ այլոց: Չի բացառվում նաեւ ուրիշ մասնագիտությունների հանդեպ եղած հետաքրքրությունը. ընդհակառակը, դրանք պետք է օգտագործել ի նպաստ սեփական անձի լիարժեք ու ներդաշնակ ձեւավորման եւ սեփական ծառայության մեջ պտղաբերման:

բ) Բարի անուն եւ փառասիրություն

Ծառայության եւ պարտականությունների մեջ հաջողվել մարդուն դարձնում է արժանավոր՝ պատիվ բերելով: Պատիվը ուրիշների կամ հասարակության կողմից որեւէ անձի առավելությունների ճանաչումն ու ընդունումն է: Այդ պատճառով պատիվ ձեռք բերելուց հետո պետք է նաեւ այն պահպանել:

Սուրբ Գրքում պատիվը ներկայացված է որպես բարիք, որը յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ձգտի պահպանել: Առաջ գրքում բարի անունը թե՛ ոսկուց եւ թե՛ արծաթից թանկ է գնահատվում. «Բարի անունը լավ է մեծ հարստությունից» (ԻԲ 1): Իսկ Սիրաքն ասում է. «Հո՛գ տար քո անվան համար, քանզի այն քեզ հետ է լինելու ավելի, քան ոսկու հազարավոր մեծ գանձերը» (ԽԱ 15-16): «Չարգանում էր իմաստությամբ, հասակով եւ շնորհով Աստծու եւ մարդկանց առջեւ», - այսպես է նկարագրվում Հիսուս Քրիստոսի մանկությունը Ղուկասի Ավետարանում (Բ 52): Ղուկաս ավետարանի վկայությամբ՝ քրիստոնեական առաջին համայնքի անդամները «Ժողովրդի մեջ հարգանք էին վայելում» (Գործք Բ 47):

Շարունակությունը՝ էջ 6

ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԱԸ

Ձեր հարցերին պատասխանում է Ղազար Բահանյան ՊԵՏՐՈՍՅԱՆԸ
Ձեր անունից հարցերն ուղղում է մեր բերքի արտահաստիչային թղթակից Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

- Տե՛ր հայր, ո՞րն է քրիստոնեական կրոնի վեհությունը, մեծությունը, եւ ինչո՞ւ է ասվում, որ այն բարոյական հեղաշրջում կատարեց մարդկության պատմության մեջ:

- Քրիստոնեությունը կյանք է, եւ Նրա վեհությունն այն է, որ Նրա Առաջնորդը՝ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, Իր կյանքը զոհեց մեղավոր մարդկության փրկության համար: Երբ Նրան ձեռքադրեցին, Նա Իր առաքյալին հրամայեց սուրբ տեղը դնել՝ բացատրելով, որ Ինքը պետք է զոհագործվի՝ մարդկության փրկության համար: Նա կամավորաբար հանձնվեց... խաչվեց, բայց երրորդ օրը հարություն առավ մեռելներից եւ մահվան կապանքը քանդեց: Քրիստոսը հարություն առավ մեռելներից եւ մեզ հարության հույսը պարգևեց: Դրվեց հավիտենական կյանքի հույսի հիմքը, իսկ հույսն ամենագործավոր ազդակն է, խթանն այս կյանքում, որով մենք մեծ-մեծ նվաճումներ ենք ունենում: Իսկ եթե մարդն ունի մահվանը հաղթող հույսը, ապա դառնում է անկարողելի, ամենադժվար իրավիճակներից էլ կարողանում է դուրս գալ՝ պարզաճակատ պաշտելով իր Տիրոջը: Ուրեմն քրիստոնեության մեծագույն հաղթանակը հաղթանակն է մահվան դեմ:

- Քրիստոսը հաղթեց մահվանը՝ Իր հետևորդներին հարության հույսը պարգևելով: «Խավարում ես ստո՞ւմ Ժողովուրդ տեսա՞վ մեծ լույսը», - ասում է մարգարեն: Քրիստոսը խավարից մեզ կանչեց դեպի Իր սքանչելի լույսը: Ինչպե՞ս է մարդը վերածնվում իբրեւ քրիստոնյա: Ի՞նչ ներգործություն է ունենում մարդու հոգու, սրտի եւ մտքի վրա աստվածային լույսը:

- Առանց Քրիստոսի գիտության, առանց փրկության հավատի՝ մարդը շատ անհույս վիճակում է գտնվում, խճճվում մտքերի մեջ: Մենք մտածող էակներ ենք, եւ դա յուրաքանչյուր մարդ անհատի մեծագույն արժանիքն է: Սակայն սխալ մտածողության արդյունքում մարդը կարող է տառապել՝ առանց տանջանքի: Մարդը կարող է նաեւ առանց վայելքի երջանիկ լինել: Մենք մտածող մարդիկ ենք, իսկ մտածողությունը կարելի է հույզեր է

առաջ բերում մեր ներաշխարհում: Եթե մարդու մտածողությունը սահմանափակվում է գերեզմանով, ապա Նա խճճվում է մտքերի մեջ եւ անհույսության մատնվում: Միայն աստվածային հայտնություններից արձագանքվող հավատն ու հույսն են ի գործ մեր մեջ մահվան խնդիրը լուծելու, մեզ դնելու ճիշտ ճանապարհի վրա, որպեսզի մեր ամբողջ կյանքն ապրենք ներդրություններ հաղթահարելով եւ առաքինազործելով:

- Փաստորեն, դժբախտ է այն մարդը, ով դեռեւս չի ճաշակել աստվածային հայտնության քաղցրությունը, չի լուսավորվել աստվածային լույսով:

- Այո՛, դժբախտ է Աստծուն չճանաչող մարդը: Այդպիսի մեկը եթե անգամ մի տոննա ոսկի ունենա, երկրավոր ամեն տեսակի հաճույքների միջով անցնի, միեւնույն է, դժբախտ է, որովհետեւ մարդը հոգեւոր էակ է, ունի հոգի, իսկ հոգեկան ներաշխարհը Նյութականով չի կարող բավարարվել, հագեցնալ: Քրիստոսը սամարացի կնոջն ասում է, որ եթե Նա իմանար, թե Ում հետ է խոսում, Իրենից շուր կուգեր, կխմեր եւ այլեւս չէր ծարավի (Իսե՛ս Հովհ. Դ 7-14): Յուրաքանչյուր մկրտված մարդ իր կյանքում հայտնագործում է Քրիստոս Փրկչին, իր ներաշխարհում գտնում Աստծուն՝ վերականգնվելով իր որդիական շնորհի մեջ:

- Տե՛ր հայր, ինչպե՞ս է հնարավոր փորձություններով եւ գայթակղություններով ի մեր ժամանակներում պահել այդ լույսը, որ չմարի:

- Հիշենք Տասնաբանյայի առաջին պատվիրանը. «Ես եմ քո Տեր Աստվածը...»: Եթե դու ընդունում ես այս պատվիրանը, ապա քո առաջ բացվում են մնացած պատվիրանները: Այս պատվիրանը պետք է պահել ամեն վայրկյան: Եթե ճանաչեցինք, դավանեցինք, մտքով ու հոգով պաշտեցինք Աստծուն, ունենք ազատ կամք, հետեւաբար մեր ազատ կամքը գործում է: Սրանից հետո պարտավորվում ենք ամեն րոպե մեր Տեր Աստծուն սուրբ պահել մեր հոգու եւ մտքի մեջ, քանի որ ամեն վայրկյան ենթակա ենք սայթաքման: Ամենախոր հա-



սին կրկնակի դժբախտ է, քանի որ ե՛ւ այստեղ է դժբախտ, ե՛ւ այնտեղ դժբախտ կլինի ու հավիտենական կրակը կժառանգի: Իսկ բարեպաշտ մարդն ամենամեծ տառապանքի մեջ անգամ կարող է երջանիկ լինել, որովհետեւ անկարողելի է, հավիտենական կյանքի հույսն ունի: Սրբության վայելքից ավելի մեծ վայելք գոյություն չունի:

- Կարելի՞ է ասել, որ բարեպաշտ մարդն այս կյանքում իսկ մասամբ ճաշակում է այդ «սրբու-

թյան վայելքը» եւ նույնիսկ իր փոքր կամ մեծ ներդրությունների մեջ կարողանում է իր կապն անխաթար պահել Աստծո հետ:

- Միանշանակ՝ Նրանք, ովքեր հոգեւոր կյանքի քաղցրությունը ճաշակել են, լավ կհասկանան: Դա մի ներքին վայելք, հանգստություն, ուրախություն, ահռելի զորություն է: Բառերը տկար են հոգեւոր կյանքի ողջ զորությունը, գեղեցկությունը ներկայացնելու համար, բայց այդ զորությունն էր պատճառը, որ խաչված Մարդուն միլիարդավորներ հետեւեցին: Ամեն մահկանացու մարդ մի բան պետք է հստակ իմանա. Աստծու պատվիրանը պահելն իր երջանկության համար է: Օրինակ՝ շնացող մարդն առաջին հերթին իրեն է վնասում, կորստյան մատնում: Ուրեմն Տիրոջ պատվիրանները մեր երջանկության համար են:

- Քրիստոսն Իր հետևորդներին ասում է. «Այստեղ, աշխարհում ներդրություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետեւ Ես հաղթեցի՝ աշխարհին» (Հովհ. ԺՁ 33): Քրիստոսյան իր Տիրոջ օրինակով նույնպե՛ս կարող է հաղթահարել ցանկացած դժվարություն այս կյանքում, այլ կերպ ասած՝ քրիստոնյայի համար կա՛ն անհաղթահարելի դժվարություններ այս կյանքում:

- Ո՛չ, որքան էլ դժվարությունները ծանր լինեն, Քրիստոսի խաչի տառապանքները դրանցից առավել են, որովհետեւ չարչարվողն Ինքն Աստված է: Հետեւաբար, եթե Առաջնորդն այդպիսի ահավոր տառապանքներ է հանձն առել եւ մեզ համար դարձել օրինակ, Չորագլուխ եւ Առաջնորդ, մենք մեր մանր ներդրությունները պիտի հաղթահարենք հավիտենական կյանքի հույսով: Սբ Պողոս առաքյալն ասում է, որ «այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու գալիք փառքի հետ, որ հայտնվելու է մեզ»:

Մարկելային ՕԼԵՍՆԻՅԿԻ

Սկիզբը՝ էջ 5

Կյանքում հաջողության հասնելու համար պատվի արժանալը շատ կարեւոր է, քանզի ով հասարակության մեջ հարգանք եւ պատիվ չի վայելում, չի կարող դրանում հաջողել կամ կայանալ: Պատվիրված է՝ դիմացինի համար լինենք բարի եւ լավ օրինակ, սակայն ինչպե՞ս կարող եք խրատել ուրիշին, եթե մեր իսկ մասին լավ կարծիք չունեն: Նաեւ պետք է զգուշանանք, որպեսզի չընկնենք պատվի խաբկանքի մեջ, այսինքն՝ մարդկանց մոտ ձեռք բերած պատիվն ավելի չգնահատենք, քան Աստծու եւ մեր խղճի առջեւ ունեցած պատասխանատվությունը՝ չզոհաբերելով ներքին պատիվը: Պատվախնդրությունը կարող է տանել փառամոլության եւ եսասիրության: Փառամոլը ձգտում է հասարակության մեջ հասնել կարեւոր դիրքի եւ մեծարանքի, իսկ եսասերը ցանկանում է գրավել ուրիշներին՝ հետաքրքրության առարկա դառնալով: Ի նկատի ունենալով պատվի հանդեպ ունեցած թվացյալ կախվա-

ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԲԱՏՈՒԹՅՈՒՆ



ծությունը՝ Պողոս առաքյալն ասում է. «Ինձ համար արժեք չունի դատված լինելը ձեզանից կամ նույնիսկ՝ մարդկանցից. եւ ես ինքս իմ մասին չգիտեմ, բայց սրանով չեմ արդարանում, որովհետեւ Նա, որ դատում է ինձ, Տերն է» (Ա Կորնթ. Դ 3-4): Նախատելով փառամոլ եւ եսասեր փա-

րիսեցիներին՝ Հիսուս Քրիստոսն ասում է. «Դուք ինչպես կարող եք հավատալ, քանի որ իրարից եք փառք առնում եւ չեք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս» (Հովհ. Ե 44): Երբ ձեռք ենք բերում մարդկային փառք, գրկվում ենք աստվածայինից: Այդ պատճառով համբերատարու-

թյամբ եւ հնազանդությամբ պետք է ընդունենք պատվի անարդար ուղևորումը: Պողոս առաքյալի խոսքի համաձայն՝ պետք է մխիթարենք միմյանց «իբրեւ թե անծանոթներ, բայց բոլորից ճանաչվածներ» (Բ Կորնթ. 2 9): Մենք ունենք նաեւ Աստծուց տրված մեծ պատգամ. «Երանի՛ր նրանց, որ հավածվում են արդարության համար, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը: Երանի՛ր՝ ձեզ, երբ ձեզ նախատեն ու հավածեն եւ Իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք սուտ ասեն» (Մատթ. Ե 10-11): Մենք իրավունք ունենք եւ երբեմն էլ պարտավոր ենք պաշտպանել մեր պատիվը Քրիստոսի օրինակով: Երբ հրեաները մեղադրում էին Հիսուսին, Նա մատնանշում էր Իր կողմից կատարած գործերը, որոնք արժանի չէին մեղադրանքի. «Բազում բարի գործեր ցույց տվի ձեզ Իմ Հորից. դրանցից ո՞ր գործի համար եք Ինձ քարկոծում» (Հովհ. Ժ 32): Մատնանշելով իր գործերը, սխրանքներն ու տանջանքները՝ Պո-

ղոս առաքյալը եւս պաշտպանում էր իր պատիվը (Բ Կորնթ. ԺԱ 21): Այսօր յուրաքանչյուր քրիստոնյա իր ուղևորված քաղաքում պաշտպանությունը գտնում է դատարանում, սակայն քրիստոնյայի համար հարիր եւ պատշաճ չէ ցանկացած վիրավորանքի համար դիմել դատարան: Պատվի պաշտպանությունն ու փրկությունը վիրավորողին մեծահոգաբար ներելու մեջ է: Պատիվը վերականգնելու համար հզոր միջոց է նաեւ ծառայության մեջ բարի եւ արդար գործեր կատարելը: Տեսնելով մեր բարոյական նկարագիրը եւ հավատարմությունը դեպի բարությունը՝ մեր մասին չարախոսողները եւ մեզ չհասկացողներն ստիպված պիտի լռեն. «Նրանք, որ չարչարվում են ըստ Աստծու կամքի, բարեգործություն անելով թող իրենց հոգիները հանձնեն հավատարիմ Ստեղծողին», - ասում է Պետրոս առաքյալը (Ա Պետ. Դ 19):

Շարունակելի
Ուսերենից թարգմանեց
Օլգա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Ռասայական, ազգային եւ կրօնական անհանդուրժողականության հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում

Ազգայնամոլությունը եւ կրօնական անհանդուրժողականությունը մեր դարաշրջանում դարձել են մարդկության առջեւ ծանացած լրջագույն մարտահրավերներից: Թող չստեղծվի այն թյուր կարծիքը, թե անհանդուրժողականության եւ այլատեցության արատավոր եւ նշավակելի երեւոյթները նորություն են համաշխարհային պատմության մեջ: Բնավ՝ ոչ: Համաշխարհային պատմությունը փոքրիշատե ճանաչող յուրաքանչյուր անձ հավանաբար կփաստի, որ մարդկության անցած ողջ պատմական ուղին լի է եղել անհանդուրժողականության տարաբնույթ դրսեւորումներով, եւ, ցավոք, այդ դրսեւորումներն առկա են նաեւ ժամանակակից, այսպէս կոչված՝ «քաղաքակիրթ» աշխարհում: Թերեւս սխալ չի լինի ենթադրել, որ անհանդուրժողականությունն իր բնույթով սոցիալ-հոգեբանական երեւոյթ է: Այժմ փորձենք հասկանալ մերօրեի այդ երեւոյթը ծնող պատճառները: Նախ նշենք, որ «անհանդուրժողականություն» ասվածը կապված չէ լոկ մարդկային հասարակարգի հետ: Այն առկա է նաեւ կենդանական աշխարհում, ինչու՞մ կարելի է դուրսբերել համոզվել՝ կենդանիների վարքը դիտարկելու միջոցով: Կենսաբանական մի տեսակ, որն ավելի ուժեղ է, կենսունակ ու տոկուն, ոչնչացնում է ավելի թույլ տեսակին եւ այս եղանակով շարունակում իր բնականոն գոյությունը: Այս կենսաբանական գործընթացի հիմքում ընկած է ինքնապահպանման բնագոյը, որը բնորոշ է ոչ միայն կենդանիներին, այլեւ մարդկանց: Ներկայացված համեմատությունը որոշ ընթերցողների կարող է չափազանցված եւ անընդունելի

թվալ՝ Եթեկայի տեսանկյունից, սակայն փաստն այն է, որ անհանդուրժողականությունն ի սկզբանէ բխում է բնությունից, ֆիզիոլոգիայից եւ բնագոյներից: Ինչեւէ, կենդանական եւ մարդկային անհանդուրժողականության միջեւ կա մի էական տարբերություն. կենդանիները, զուրկ լինելով մարդկանց հատուկ գիտակցական մակարդակից, դեկավարվում են բացառապէս բնագոյներով, իսկ մարդ արարածը, օժտված լինելով որոշակի ինտելեկտով, ունի լիարժեք հնարավորություն՝ կառավարելու իր սոցիալական վարքը, տարբերելու լավը վատից, ճիշտը՝ սխալից, չարը՝ բարուց, եւ բարոյականը՝ անբարոյից: Հավելենք, որ, ի տարբերություն կենդանական աշխարհի ներկայացուցիչների, մարդ արարածն ունակ է լիովին գիտակցելու իր արարքները ու դրանցից բխող հետեւանքները, ուստի եւ նա միանշանակորէն պատասխանատու է իր յուրաքանչյուր գործողության համար: Եթե մարդ արարածն անհանդուրժողականություն է դրսեւորում, ապա նա, որպէս կանոն, քաջ գիտակցում է դրա պատճառները եւ նպատակները: Նա ունի նաեւ ընտրության հնարավորություն. այսինքն՝ ցանկության դեպքում նա կարող է լինել հանդուրժողական այն սուբյեկտների հանդէպ, որոնք օբյեկտիվորէն տարբերվում են իրենից կամ ընդհանուրից: Սակայն, ինչպէս վկայում են մարդկության պատմությունը եւ ժամանակակից կյանքը, այդ ընտրությունը շատ հաճախ կատարվում է ի վնաս ուրեւ մեկի կամ որեւէ սոցիալական խմբի: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Բանն այն է, որ ինչպէս պատմական անցյալում, այնպէս



Ել այժմ մարդկության մի զգալի հատվածն առաջնորդվում է եսակենտրոն մոլումներով եւ ոչ թե հումանիստական վեհ արժեքներով ու ճշմարիտ բարոյաէթիկական սկզբունքներով, որոնց մասին բազմիցս խոսել եւ գրել են տակավին Վերածնության եւ Լուսավորության դարաշրջանների մեծագույն մտածողները: Հավելենք, որ հանդուրժողական մտածելակերպի ձեւավորումը բավականին դանդաղ գործընթաց է, որի վերջնական, շոշափելի արդյունքները երեւան են գալիս հայուրամյակներ, եթէ չասենք՝ հազարամյակներ տեւող համառ ու հետեւողական աշխատանքի արդյունքում: Այդպիսի աշխատանքի շնորհիվ նույն Եվրոպան, որը միջնադարում ընկղմված էր բարբարոսության, խավարամոլության եւ կրոնական դոգմատիզմի մեջ, որտեղ կրոնական հալածանքները եւ հետապնդումները սովորական իրողություններ էին, կարողացավ գիտակցել հանդուրժողականության կարեւորությունը եւ, վերջ ի վերջո, կյանքի կոչեց այդ հույժ կարեւոր սոցիա-

լական սկզբունքը: Հանդուրժողականության ձեւավորման ու հաստատման ուղղությամբ լրջագույն աշխատանք է տարվել նաեւ Ամերիկայում: Ինչպէս գիտենք պատմությունից՝ ռասայական անհանդուրժողականությունն օրինաչափ երեւոյթ էր համարվում ամերիկյան մայր ցամաքում. տարիներ շարունակ ամերիկյան հնդկացիները եւ սեամորթ ստրուկները դաժան վերաբերմունքի էին արժանանում եվրոպացի գաղութարարների կողմից, ինչի հետեւանքով բազմահազար մարդիկ ֆիզիկական բնաջնջման ենթարկվեցին: Իրավիճակն Ամերիկայում էապէս փոխվեց այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի 16-րդ նախագահ Աբրահամ Լինքոլնը 1861-1865 թթ. վերացրեց ստրկատիրությունը: Սակայն ռասայական անհանդուրժողականության հիմնախնդիրը վերջնական լուծում ստացավ միայն XX դարի երկրորդ կեսում: Սրա վառ ապացույցն է սեւամորթների ակտիվ ներգրավումը ԱՄՆ-ի հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում, ընդամին՝ պե-

տական կառավարման համակարգում: Իսկ ռասայական հանդուրժողականության գազաթնայնէտը դարձավ աֆրո-ամերիկացի նախագահի ընտրությունը, ապա նաեւ՝ վերընտրությունը: Եթե Եվրոպայում եւ Ամերիկայում զգալի առաջընթաց է արձանագրվել ռասայական, ազգային եւ կրոնական հանդուրժողականության հարցերում, ապա այլ աշխարհամասերում տակավին լրջագույն խնդիրներ կան: Բնական է հիշել Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող պատմաքաղաքական արյունալի իրադարձությունները: Խոսքը վերաբերում է ազգային եւ կրոնական փոքրամասնություններին ուղղված բռնարարքներին, որոնք արդեն պարբերական բնույթ են կրում, եւ որոնց արդյունքում արդեն իսկ զոհ են գնացել տասնյակ հազարավոր այլազգիներ ու այլադավաններ, այդ թվում՝ նաեւ՝ հայեր: Ցավալի է, բայց փաստ, որ Մերձավոր Արեւելքի դրամատիկ իրադարձությունները դեռեւս հեռու են ռացիոնալ հանգուցալուծումից: Սրա պատճառն անհայտորէն այն է, որ մարդկային հասարակությունն իր ամբողջության մեջ մինչ օրս չի սովորել տարբերակել ճշմարիտը մոլորությունից, չարիքը՝ բարիքից, բարոյականը՝ անբարոյից: Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ չարն ու անբարոն դարձել են կյանքի նորմ, եւ թվում է, թե անհնար է ապրել ժամանակակից աշխարհում՝ առաջնորդվելով մարդասիրության կմետ իդեալներով: Այսպիսով կասկածի տակ է դրվում ասես «չհակառակվել չարով չարին, եւ միայն բարոյությամբ պայքարել չարի դէմ» քրիստոնեական սկզբունքը: Ասվածը թող ընթերցողների կողմից չընկալվի որպէս աստվածաշնչյան դրույթների քննադատություն կամ դրանց մերժում, քանզի Սուրբ Գիրքն Աստծո խոսքն է՝ ուղղված մարդկությանը, իսկ այդ խոսքը, ինչպէս հայտնի է, անքննելի է: *Շարունակությունը՝ էջ 8*

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4
Ահա թե ինչու այս շրջանը երբեք չի վրիպել հայ գրողների ուշադրությունից: Մի կողմից՝ հայոց պետականության անկում, մյուս կողմից՝ բարոյական ու ոգեղեն ուժերի մի նոր խտացում, որ ծնունդ տվեցին հայոց գրին, ոսկեդարյա դպրությանը, որ որոշեցին Ավարայրի ճակատամարտի բախտը: Հայոց պետականության այս դրամատիկ շրջանին է նվիրված **Պ. Չեթունցյանի** «Ավերված քաղաքի առասպելը» (1974) ողբերգությունը: Նյութը նոր չէ՝ հայ գրականության համար, իսկ հեղինակն էլ նույն նյութը, թատերգությունից գատ, ներկայացրել էր եւ վիպական տարբերակով («Արշակ Երկրորդ», 1977): Ի՞նչն է այս հետեւողական ուշադրության պատճառը. նախ՝ ժամանակաշրջանը, եւ ապա՝ Արշակի ողբերգական կերպարը: Հայոց արքան ձգտում է ստեղծել կենտրոնաձիգ պետություն, հիմնադրում ժողովրդի միասնությունը խորհրդանշող եւ ուժը արտահայտող մայրաքաղաք՝ Արշակավանը, բայց եւ տանուլ տալիս պատմության մեծ խաղը՝ իր վախճանը գտնելով թշնամու զնդանում: Հեղինակը նրա քաղաքական պարտությունը նախապատրաստում է բարոյական պարտությամբ (գժտությունը նախարարների հետ, Գնելի սպանությունը՝ Փառանձեմին տիրանալու համար): Իրականում Արշակը, իրոք, եղել է բարդ ու հակասական կերպար, որ վկայում են պատմիչները: Բայց եւ նույն պատմիչների վկայությամբ՝ նա եղել է պետական մեծ



գործիչ, որի պարտությունը, սակայն, պիտի պատճառաբանել ոչ թե սոսկ նրա անձնական կյանքի թուլություններով, այլ՝ պատմական անխուսափելի դեպքերի թելադրանքով: Արշակ թագավորի կերպարի մեկնաբանության հեղինակային հայեցակետը բոլոր դեպքերում չէ, որ ենթարկվում է պատմական օրինաչափություններին, երբեմն այն կամայական է, ինչը եւ թուլացնում է ողբերգության ներգործման ուժը: Հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների, ինչպէս նաեւ առանձին ռազմաքաղաքական գործիչների կյանքն ու պայքարն են արտացոլված նաեւ **Գ. Սարյանի** «Գուրգեն գորավար» (1968) եւ «Գրիգոր Դերեն» (1966), **Գ. Գեւորգյանի** «Աշոտ Երկաթ» (1964), «Հովնան Խութեցի» (1969) դրամաներում: Բոլոր այդ գործերն ունեն թատերգական նույն կառուցվածքը, որը բնութագրվում է պատմական

բախտորոշ իրադարձությունների ընթացքը տնօրինող հերոսների գործունեության ու հոգեբանության պատկերմով: Նշված չորս դրամաների նյութը 9-10-րդ դարի դեպքեր են, երբ ժողովուրդն ու նախարարական տները ոտքի էին կանգնել՝ թոթափելու արաբական ծանր լուծը, վերականգնելու հայոց պետականությունը: Գ. Սարյանը ներկայացնում է Արծրունյաց եւ Բագրատունյաց թագավորությունների ստեղծումը՝ գլխավոր հերոսներ ունենալով հայրենասիրական մեծ լիցք կրող գործիչներ: Գ. Գեւորգյանի պատկերած նյութն ու հերոսները նորություն չէին հայ գրականության մեջ, եթե նկատի ունենանք Սուրբանի «Գեւորգ Մարգպետունի» եւ Ծերենցի «Երկունք Թ դարու» պատմավեպերը: Այդուհանդերձ, թատերագիրն իր հերթին կարողացել է վերստեղծել պատմական ժամանակաշրջանի եւ քաղաքական ու ժողովրդական հերոս-

ների գործունեության բեմական տարբերակը: Նորամուծություններն ավելի զգալի են «Հովնան Խութեցի» դրամայում: Ժամանակն ստեղծում էր իր հերոսներին, որոնց գործունեության պատմական անհրաժեշտության գիտակցումն էլ ձեւավորել է դրամաների գաղափարական ու հոգեբանական միջավայրը: Հայ թատերագրության մեջ կարեւոր տեղ ունեն նաեւ **19-20-րդ դարերի պատմական իրադարձությունները**: Հեռավոր ժամանակներին գալիս են փոխարինելու մոտիկ անցյալի հիշարժան դեպքերը, որոնց արձագանքները դեռեւս կենդանի են սերունդների հիշողության մեջ: Այսինքն՝ չի կտրվում ժամանակների կապը, այլ ներքին փոխանցումներով հասնում է մեր օրերը: Արեւելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու իրադարձություններին է նվիրված **Գ. Գեւորգյանի** «Լույսը հյուսիսից» (1977) դրաման: Պարսկական տիրապետությունից ազատագրվելու պատմական նշանակությունը հիմնավորված է ոչ միայն ժողովրդի ծանր վիճակի պատկերումով, այլեւ ազատության սպասումով եւ հանուն դրա մղած տեսական պայքարով: Դրամատիկական դեպքերին մասնակցում են եւ պատմական դեմքեր՝ Ներսէս Աշտարակեցին, գեներալ Պասկեւիչը, Պուշկինը եւ պատմական իրադարձությունների ընթացքը ներկայացնող այլ հերոսներ: Վերջին տարիների հայ թատերգության ակներեւ նվաճումներից է **Յ. Մաթեոսյանի** «Չեզոք գոտի» (1973) դրաման: Ժամանակը 1914 թ. հուլիս ամիսն է՝ անմիջապէս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը: Գործողությունների վայրը Անին է՝ հայոց հնագույն մայրաքաղաքը, որ ավերակների մեջ է: *Շարունակությունը՝ էջ 8*

ԼԵՃՎԱՐՏԱԿՅՈՋԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՆԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ «ՉԱՆԳԻ» ՆԱՎԵԼՎԱԾՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

Լեզվամտածողական այդ հա-րազատությունը հատկապես զգալի է գորաբարով գրված հատ-վածներում, ուր ակնառու են Աբո-վյանի՝ մեծ նախորդի գրելաոճին բնորոշ հատկանիշները. «Չանգի՛, Չանգի՛, անողորմելի իմ Չանգի՛ սիրտ իմ մորմոցի, աղիք իմ գալա-րին, ոսկերք իմ քստմսին, ուշ իմ աղմկի, հոգիս բորբոքի, տուայ-տիմ ի ծուկիս, հառաչեմ լալով, հայցեմ ողբալով, ա՛հ զիմ արտա-սուս, տո՛ւր ինձ սփով, յոյս»։ Ե՛վ Նարեկացու, Ե՛ւ Աբովյանի ստեղ-ծագործություններում առկա են մի շարք այլ ոճական հատկանիշ-ներ, օրինակ՝ պատկերների հա-կադրությունը, որոնց առատու-թյունը երբեմն կուտակման է հաս-նում։ Բառային նման կուտակում-ները թեեւ ծանրացնում են խոսքի ընթացքը, սակայն ներկայացվող երեւույթը, առարկան բնութագ-րում են տարբեր կողմերից, էլ ա-վելի ընդգծելի դարձնում հետամ-տած գաղափարը։

Ոճական-արտահայտչական նպատակով Աբովյանը կողք կող-քի օգտագործում է նաեւ հականիշ բառեր, որոնց հակադրականու-թյունը ավելի արտահայտիչ է դարձնում խոսքը, օրինակ՝ «Գե-

տինը պոկելով, կենդանի, անկե-դան, իսան, հայվան գետնին զար-կելով որ չի գալիս ամեհի Չա-նգին...»։

«Չանգի»-ում գործածվել են նաեւ այսպես կոչված թեմական համեմատություններ, որոնք կազմվում են «ասես», «կարծես», «հենց իմանաս», «ինչպես» բառե-րով, որոնք ավելի պատկերավոր են դարձնում գրողի խոսքը։

Աբովյանի նախընտրած ոճա-կան հնարաններից է կրկնությու-նը՝ իր տարատեսակներով՝ հա-րակրկնություն, վերջույթ, կրկ-ներգ։ Կարող են կրկնվել բառեր, արտահայտություններ, անգամ՝ նախադասություններ։ «Չանգի՛, Չանգի՛, գեղեցի՛կո իմ Չանգի։ Քո երկնակամար երեսը տեսնելիս, քո տխուր ձեռք լսելիս, քո սուրբ ջու-րը բերան առնելիս, քո ծաղկա-զարդ ձորերի միջումս, քո գորա-վոր ափերի դրաղին, քո սպիտակ, լուսաթաթախ փրփրի տակին սգի ձենն առնելիս, քո սիրուն աչ-քերի աղի արտասուքը տեսնելիս բաս ի՛նչ կըլեր որ քո ջքավոր որդիքը ու թոռուքը մեկ միտք ա-նեին, գլխերին վա՛յ տային»։ Ինչ-պես նկատելի է, կրկնվում է ոչ միայն «Չանգի» բառը, այլեւ «քո» դերանունը, որով շեշտվում է, թե



խոսքն ում է վերաբերում, ով է հասցեատերը։

Անձնավորումը, իբրեւ ոճական հնարան, հայտնի է դեռեւս հնա-գույն ժամանակներից։ Այն առա-վել գործածական է չափածո ստեղծագործություններում եւ բա-նահյուսական նյութերում։ Աբո-վյանը վեպի «Չանգի» գլխում բնության երեւույթների անձնա-վորման շնորհիվ առավել կենդա-նի ու խոսուն է դարձնում բնու-թյան երեւույթները։ Այսպես՝ «ա-մեհի Չանգին», «տխուր Ձորագե-ղը», «տիրոջից խոռված ոչխարը» վերոնշվածի հաստատումն են։

Շարունակելի
ստի սսսսՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ...

Սկիզբը՝ էջ 7

Հերոսները ճարտարապետներ են՝ առաջին հերթին շինարա-րական արվեստի հետազոտող Աբել Արծաթբանյանը, նրա լուրջ աշխատանքով հետաքրքրվող այլ ճարտարապետներ, հանձնա-խումբ, գյուղացիներ, Մայր տաճարի վանահայրը...

Արծաթբանյանի հավաստի նախատիպը հայ ճարտարապե-տության ուսումնասիրող Թորոս Թորամանյանն է, որի հայտնա-բերած նյութերի օգտագործումով ավստրիացի գիտնական Իգոր Ստրոժիգովսկին հրատարակեց երկհատոր աշխատություն։ Ար-ծաթբանյանի կերպարը դրամայում խորհրդանշում է տառապող ու չգնահատվող հանճարի ճակատագիրը, որը ինքը՝ հայրենիքն է։ Այդ հայրենիքը ճանաչելու ու գնահատելու են գալիս կայսերական ակադեմիայի հանձնախմբի անդամներ, այդ հայրենիքի մասին խոսում են նաեւ հեռուներից եկած երկու երիտասարդ հայ ճար-տարապետներ։ Եվ պարզվում է, որ ամեն ինչ խոսք է, հեռակա հայրենասիրություն կամ հայրենիքի պատմության վերլուծու-թյուն, իսկ բուն հայրենիքը չկա, քանի որ չկա նրա պատմությունն ու ներկա վիճակը խորհրդանշող ճարտարապետի աշխատանքի գնահատությունը։

Հարցի դրվածքն ի վերջո հանգում է հայրենիքի ըմբռնման գա-ղափարին։ Ո՞րն է հայրենիքը, ի՞նչն է հայրենիքը, ո՞վ է նրա հիշո-ղություն պահպանող, պատմությունը շարունակողը։ Այս երկխո-սությունն ինքնին առկա է հայրենիքի խորհրդանշիչը հանդիսացող ճարտարապետի եւ եկվորների միջեւ։ Բայց եւ այն ճեղք է տալիս եւ սուր բախման վերածվում երկու երիտասարդ հայ ճարտարա-պետների միջեւ։ Նրանցից մեկը՝ Բահաթրյանը, համաշխարհա-քաղաքացի է, նրա հայրենիքն աշխարհն է, որին էլ ինքը ծառայում է, իսկ մյուսը՝ Տեր-Սարգսյանը, ճշմարիտ հայրենասեր է, նրա հա-մար հայրենիքն արյամբ սրբագործված մի բուռ հողն է, որին եւ պետք է նվիրվել։ Նրանցից մեկն Անիի ավերակներին նայում է զմայլված զբոսաշրջիկի պես, իսկ մյուսի սրտից արյուն է կաթում, քանի որ ազգային ցավն ահավոր ուժով սեղմում է կոկորդը։

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Չաքարիա վրդ. ԲԱՂՈՒՄՅԱՆ. ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողի-կոսի օրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջ-միածնի հրատարակչական բաժինը «Ս. Էջմիածնի գիտական ժառանգությունը» շարքով լույս է ընծայել Չաքարիա վար-դապետ Բաղումյանի «Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում» աշխատու-թյունը։ Այս ուսումնասիրությամբ առա-ջին անգամ համակողմանիորեն անդրա-դարձ է կատարվում ծիսաստվածաբա-նական այն խնդրին, թե ինչու Հայոց Եկե-ղեցին, ի տարբերություն քրիստոնեա-

կան մյուս Եկեղեցիների, սուրբ Պատարագի ժամանակ ջուր չի խառնում հաղորդության գինուն։

Ուսումնասիրության նպատակն է Հայոց Եկեղեցու հայրե-րի, վարդապետների եւ սրբազան ավանդության միջոցով տես-նել եւ ցույց տալ, թե ինչպես է մեր Եկեղեցին մեկնաբանել այս կամ այն սուրբգրային տեղին, հարկ եղած դեպքում ինչ փաս-տեր եւ հակափաստարկներ է բերել՝ ապացուցելու համար ա-նապակ գինով պատարագելու իր Ավանդությունը։

Աշխատությունը նախատեսված է աստվածաբանների, հա-յագետների եւ ընթերցողների լայն շրջանակի համար։

Գիրքը տպագրվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արեւմ-տյան թեմի մեկենասությամբ։

Սուրբ ժեննյան տոնի առիթով այցեր ազատագրվման վայրեր

Մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ ժեննյան եւ Աստվածայայտության տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրեակատարողական հիմնարկների հոգեւոր ծառայությունը՝ գլխավորությամբ ծառա-յության պատասխանատու Տ. Ռուբեն արքեպ Չարգարյանի, կազմակերպել էր հոգեւորականների այցելություններ ՀՀ քրեա-կատարողական հիմնարկներ։ Այցերի ընթացքում ազատագրվ-ման վայրերում բանտային կառույցի եկեղեցականները մատու-ցեցին Սուրբ Պատարագ, կատարեցին քրոհներքի, տնօրինեցի եւ հոգեհանգստի արարողություններ՝ դատապարտյալներին ու աշ-խատակիցներին փոխանցելով սուրբ ժեննյան ավետիքը։ Տեղի ու-նեցավ նաեւ մի քանի դատապարտյալների մկրտություն։

Ծառայության հոգեւոր սպասավորները, շարունակելով «Ա-ջակցությունը դատապարտյալների ընտանիքներին» ծրագիրը, Ամանորի եւ Սուրբ ժեննյան տոնների առիթով այցելեցին նաեւ ա-զատագրվածների 20 ընտանիք, որոնք ապրում են սոցիալա-պես ծանր պայմաններում եւ ունեն անչափափաս երեխաներ։ Այցի ընթացքում կատարվեցին տնօրինեցի արարողություններ, տեղի ունեցան հոգեխնամ գրույցներ ընտանիքների անդամնե-րի հետ, ինչպես նաեւ ընտանիքներին հանձնվեցին տոնական նվերներ, ցուցաբերվեց դրամական օգնություն։


Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՄԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՐԵԿԱՏԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Ռաաայական, ազգային եւ կրոնական ...

Սկիզբը՝ էջ 7

Բանն այն է, որ մարդկային հասարակության մեջ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում ազդեցիկ բռնկումներ։ Մարդ արարածի մեջ մերթ ընդ մերթ արթնանում են կենդանական բնագոյները։ Լինում են պառիս, երբ մարդիկ կարծես մոռանում են իրենց մարդ լինելու մասին եւ նմանվում են կենդանական աշ-խարհի այլ ներկայացուցիչներին։

Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է մարդկությունը բռնել հետընթացի ուղին՝ փոխանակ առաջ գնալու եւ ավելի քաղաքակիրթ դառնալու։ Տարբեր բնագավառների մարդիկ, թերեւս, տարբեր կերպ կբացատ-րեն ներկայացված մտահոգիչ իրո-ւթյունները։ Օրինակ՝ աստղա-բանները մարդկային վարքի անո-մալ փոփոխությունները պատճա-ռաբանում են տիեզերական մար-մինների անբարենպաստ դասավի-րությամբ։ Հավատացյալները մարդկային չարության բռնկումնե-րը բացատրում են սատանայի դի-վային ուժի ազդեցությամբ (մեր ժամանակներում այս տեսակետն առնվազն զավեշտական կթվա բազմաթիվ մարդկանց)։ Հոգե-բույժներն ու հոգեբանները, հավա-նաբար, առկա ազդեցիկ կբա-ցատրեն նրանով, որ մարդիկ ամե-նատարբեր ախտածին գործոննե-րի ազդեցության ներքո կորցրել են իրենց հոգեկան հավասարակշռու-թյունը։ Կարելի է գործոններից մե-կը, ըստ երեւույթին, աշխարհի Եկո-լոգիական պայմանների շեշտակի վատթարացումն է, ինչն անկաս-կած կարող է հանգեցնել տարաբ-նույթ հոգեֆիզիկական խնդիրնե-րի, հետեւաբար նաեւ վարքային փոփոխությունների։ Երկրորդ ախ-տածին գործոնը ենթադրաբար այն է, որ գիտատեխնիկական ան-նախադեպ առաջընթացի արդյուն-քում կյանքի ռիթմը հետզհետե ա-րագանում է, իսկ մարկանց կենսա-բանական ռիթմը՝ ավաղ ո՛չ։ Այս դիսբալանսը, որպես կանոն, հան-գեցնում է ներոզների կամ էլ այլ առավել լուրջ հոգեկան խնդիրնե-րի, որոնք այս կամ այն չափով կապված են ազդեցիկ վարքագծի առաջացման հետ։ Մարդկային



ազդեցիկ, բնականաբար, պետք է որեւէ ելք գտնի։ Ծառ հաճախ այդ ազդեցիկ ուղղորդվում է այլ մարդկանց դեմ։ Հակառակ պարա-գայում ազդեցիկ կարող է վերած-վել առտոազդեցիկ (ինքնաազ-րեցիկ) եւ նույնիսկ հանգեցնել ինքնասպանության, ինչը կոպտո-րեն հակասում է քրիստոնեության սկզբունքներին։ Այժմ հարց է առա-ջանում. ո՞րն է վերջը նշված խնդիր-ների հաղթահարման առավել ար-դյունավետ ուղին։ Անկասկած՝ կյանքի համար բարենպաստ ու ներդաշնակ պայմանների ստեղ-ծումը աշխարհի բոլոր երկրներում եւ բացառապես բոլոր հասարա-կությունների համար։ Թերեւս պարզից էլ պարզ է, որ նշված ա-ռաքելությունը բնավ էլ հեշտերից չէ, եւ դրա իրականացումը, ան-շուշտ, մեկ օրվա գործ չէ։ Կյանքի ներդաշնակությունը վերաստեղծե-լու համար անհրաժեշտ են համաշ-խարհային հանրության բոլոր ան-դամների փոխհամաձայնեցված ջանքերը, ինչը երկար ժամանակա-յին կտրվածքով կարող բերել իր բաղձալի պտուղները։ Իսկ քանի դեռ մարդկության մեծ մասը չի յու-րացրել խաղաղ համակեցության կանոնները, մարդիկ ուղղակիորեն դատապարտված են կործանման, ինչի մասին, ի դեպ, շատ պատկե-րավոր ձեւով խոսվում է Սուրբ Գր-քում։ Համաշխարհային պատմու-թյունը վկայում է, որ երբ մարդիկ չեն առաջնորդվում Ավետարանի վեհ գաղափարներով ու մարդասի-րության օրենքներով եւ ընկղմվում են մեղքի ու արատների մեջ, նրանք վաղ թե ուշ ինչ-որ կերպ հատուցում են իրենց անբարո կարքագծի համար. շատ հաճախ դա լինում է բնական աղետների,

համաճարակների եւ նույնիսկ տիեզերական մասշտաբի ար-հավիրքների տեսքով։ Սուրբ Գրքում, անկասկած, կան նմա-նատիպ նկարագրություններ, որոնք պետք է որ նախազգու-շացում ծառայեն մեր ժամա-նակներում ապրող մարդկանց համար, այսպիսով օգնեն նրանց գիտակցաբար դուրս գալու ստեղծված ճգնաժամե-րից եւ ամենակարեւորը՝ երաշ-խավորել յուրաքանչյուր անհատի խաղաղ ու արժանապատիվ կյան-քը եւ մարդկանց ներդաշնակ հա-մակեցությունը մեկ աշխարհում, որն իրականում այնքան էլ մեծ չէ, ինչպես մեզ երբեմն թվում է։ Ի վեր-ջո մարդկությունը պետք է հավաքա-նա, որ համաշխարհային գլոբա-լացման եւ ինտեգրացիայի պայ-մաններում բոլոր մարդիկ, անկախ ռասայից, էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, հետզհետե մեկ մեծ ընտանիքի անդամներ են դառնում, եւ եթե այդ մեծ ընտանի-քի անդամներից նույնիսկ մեկը դժ-բախտ է, այդ ընտանիքն իր ամ-բողջության մեջ չի կարող երջանիկ համարվել։

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաքաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.

16.1.2014 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ